


ԿՈՒԻՏՍՈՒ



СИДИЛ ВЪ КОМНАТЕ СЪ  
СВѢТЛЫМ ПАЛАЩИМ СЪ  
СВѢТЛЫМ ПАЛАЩИМ СЪ

ПЕЧЬЮ СЪ СИДІЛ СЪ  
ПЕЧЬЮ СЪ СИДІЛ СЪ

СЪ СИДІЛ СЪ СЪ СЪ СЪ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ

ГЕОРГИЙ ГЕОДАКЯН

КОМИТАС



Издательство “Гитутюн” НАН РА  
ЕРЕВАН 2000

929:78(479.28) Կոմիտաս

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԿՅԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ա

A 20546




ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ 2000

Դ.ՏՀ 78(479.25)  
Գ.ՄԴ 85.313(2Հ)  
Կ 685գ

## ԳՅՈՒԱԿՅԱՆ Գ.

# Կ Ո Մ Ի Տ Ս Ա Ս


Կ 685գ Պատ. խմբագիր՝ Ա. Տեր-Սիմոնյան



Կ  $\frac{4905000000}{703(02)-2000}$   
ISBN 5-8080-0467-5

Գ.ՄԴ 85.313(2Հ)

© Գ. Գյուղակյան  
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2000



Կոմիտաս  
(Ակադիչ՝ Ե. Թաղեռոյան)



# I

Հայրենի երգն ես դու մեր՝  
Վերադարձած հայրենիք: -  
Դեմքի տաճաճնքն է դրել  
Ամազոռույն մի կճիք: -  
Եվ հանճարի հեռակա  
Հուրն է հանգչում ճակատիդ  
Ինչպես մարդ ճառագայթ  
Արարատի գազարին:

## Եղարենց «Requiem aeternam Cum suscipiat»

Հայ ժողովրդի հոգեւոր կյանքում Կոմիտասը զբաղեցնում է քացառիկ տեղ: Նա եղել է հանճարեղ երգահան, ազգային դասական երաժշտական դպրոցի հիմնադիրը: Սակայն հայության մեջ նրա անվան հետ առնչվում է նաև առավել նշանակալի, ծանրակշիռ ու քանկարծեք մի քան: Կոմիտասին հաճախ համեմատում են Սեսրոպ Մաշտոցի հետ: Նա, ում հայտնի է Հայաստանի պատմությունը, կիասկանա, թե ինչ կարող է նշանակել զուգորդումը 5-րդ դարում հայկական այրութենը ստեղծող մեծ իմաստունի անվան հետ:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր երկրի, նրա քնության, նրա մարդկանց ներաշխարհի, նրա ազգային մշակույթի բուն էությունը մարմնավորող խորիրդանիշները: Ինչպես Զարենցն է ասել.

Իմ կարուտած սրտի համար ոչ մի ուրիշ հերիաք չկա.

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.

Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ զագաք չկա.

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Արարատ, Մաշտոց, Նարեկացի, Ջուչակ, Աբովյան ... Այս շաբթում, անտարակոյս, կարելի է ավելացնել ևս մի քանի անուն: Հայրենի երկրի ուրույն խորհրդանիշ է դարձել և Կոմիտասի անունը:

Ինչու՞ այդպես եղավ: Չէ՞ որ Հայաստանը իր բազմադարյան պատմության ընթացքում ունեցել է ոչ սակավաբիզ ակնառու արվեստագետներ՝ գրողներ ու բանաստեղծներ, երաժիշտներ ու նկարիչներ, դերասաններ ու քանդակագործներ: Ինչու միայն Կոմիտասին էր վիճակված այդպիսի տեղ գրավել ժողովրդի սրտում, նաև այն մարդկանց սրտերում, որոնք երբեմն բավական հեռու են երաժշտական արվեստից: Դժվար է սրան միանշանակ պատասխան տալ: Անկասկած է միայն, որ Կոմիտասի հետմահու փառքի մեջ անխօնիորեն միահյուսվել են գրեթե առապելական դարձած նրա անհատականությունն ու կյանքի գործը:

Կոմիտասի ճակատագրում, նրա փշապատ ու ողբերգական կյանքի կորագծում արտացոլվել է հայ ժողովրդի պատմության մի ամբողջ դարաշրջան: Ազգային ինքնազիտակցության վերելքի, պայքարի, ծնունդ առնող հույսերի ժամանակը և հայ ժողովրդի բազմաչարչար պատմության ամենաահավոր էջերը նսեմացնող 1915թ. զարիութելի ողբերգության ժամանակը: Կոմիտասը ցմրուր դատարկեց իր ժողովրդին բաժին ընկած տառապանքների դառը գավաքը: Նա կրեց հայրենի վայրերից բռնի ուժով տեղահանված և Անատոլիայի ու Սիցագետքի անապատներում տանջալի մահվան դատապարտված իր հարյուր հազարավոր հայրենակիցների ճակատագիրը: Կոմիտասը հրաշքով փրկվեց: Ընկերները, երկրպագուները կարողացան աքսորից պոկել սիրելի երաժշտին: Սակայն արդեն ոչ էր: Վշտահար դատողությունը լրեց նրան ընդմիշտ: Քսան երկար տարիներ շարունակվեց այդ կյանքը, որ նման չէր կյանքի և մահը, որ նման չէր մահվան: Իսկ նույն այդ ժամանակ նրա արվեստը նվաճում էր հիրավի համաժողովրդական ճանաչում: Ժողովրդի գիտակցության մեջ Կոմիտասի կերպարը ասես շոշափելիորեն մարմնավորեց հայրենիքի ողբեր-

գական անցյալը և նրա հավերժ կենդանի ստեղծագործ ոգին:

Կոմիտասի կերպարը ոգեշնչեց ստեղծելու մեծաթիվ պոեմներ, վեպեր, գեղարվեստական կտավներ, քանդակներ: Նրան սրտահույզ տողեր նվիրեցին մեր ականավոր բանաստեղծներ Եղիշե Չարենցը, Ավետիք Խահակյանը, Պարույր Սևակը:

Նրա կյանքի իրադարձությունները դուրս եկան առանձին անհատի ճակատագրի շրջանակներից: Դա հենց ցավագնորեն ծանոթ և մի ողջ ժողովրդի կողմից վերապրած պատմությունն էր:

Կոմիտասի կյանքի ուղու անսովորության մեջ արտացոլվել է նաև դարաշրջանի մի այլ էական գիծ՝ Հայաստանի ներքին հասարակական կյանքի խոր հակասականությունը, նոր, ժողովրդավարական աշխարհայեցության պայքարն իր դարն ապրած, բայց դեռևս ուժեղ կղերական հայացքների դեմ: Կոմիտասի կյանքում այդ բախումը դրսերվեց բացառիկ սրությամբ և անսրող: Որք տղա՛ նա տարվել էր Էջմիածին՝ հայ հոգևորականության կենտրոնը: Եվ դրանով կանխորշվեց նրա հետագա ճակատագիրը: Ենմարանն ավարտելը և հոգևոր կոշում ընդունելը եղան կյանքի հանգամանքների բերման օրինաշափ հետևանքը: Սակայն այն ժամանակների եկեղեցական միջավայրում լուսավորիչ արվեստագետի՝ իր աշխարհիկ կոշման հաստատումը Կոմիտասի համար ամենին էլ բերք գործ չեղավ: Արվեստագետի և եկեղեցու սպասավորի միջև «ոռմանտիկական» բախումն իրականում ամենին ոռմանտիկ տեսք չուներ: Կոմիտասի համար դա եղավ հոգեկան դրամայի, իր իրավունքների ճանաչման և սիրելի արվեստին անմնացորդ նվիրվելու հնարավորության համար երկարատև, հոգնատանց մաքառման աղբյուր: Էջմիածնի հետ խզումը և փախուստը Կոստանդնուպոլիս 1910 թվականին միայն արտաքուստ ամրացրին գործողության ձեռք բերված այն ազատությունը, որ ներքուստ նվաճված էր արդեն վաղուց: Սակայն դա տրվել էր բանկ գնով. տանջալի հոգեկան ներհակությունը, չիրականացած հույսերի դառնությունը մեծ երածշտի կյանքի պատմության ամենամշտական ու տխուր լեյտմուտիվներից է:

Սակայն որքան էլ ծանր, իսկ երբեմն էլ անտանելի էին Կոմիտասի կյանքի հանգամանքները՝ զուրկ նույնիսկ սովորական ընտանեկան քերկրանքից, հոգեկան ջերմությունից, դա, այնուամենայնիվ, առևեցուն էր ամենամաքուր, լուսավոր ու հզոր մի կրքով, որը և նրա գոյության ողջ իմաստն էր կազմում: Դա երաժշտի կոչումն էր՝ զարմանալի բազմազան իր դրսերումներում (երգահան, բանագետ, երգիչ, դիրիժոր-խըմբավար, զիտնական, մանկավարժ) և միաժամանակ ուղղված միակ նպատակին՝ հայրենի երկրի մասնագիտական երաժշտական արվեստի ուրույն հիմքերի հաստատմանը:

Ազգային մասնագիտական երաժշտության վերածննդի գաղափարը նոր հիմքի վրա, անշուշտ, միայն Կոմիտասի անձնական նվաճումը չէր: Այդ գաղափարն առաջադրվել էր քուն իսկ կյանքի կողմից, և նրա մարմնավորման ուղիները որոնել են որիշ շատ հայ երաժիշտներ ևս: Առաջադրված նպատակի լուծման ժամանակ Կոմիտասի համարձակ ու խորաքափանց միտքը հայ ազգային երաժշտական նշակույրի համար ունեցավ պատմական նշանակություն: Դա, անկասկած, ազդեցություն ունեցավ նաև մյուս արվեստների և հայ հասարակական մտքի զարգացման վրա: Կարելի է հավաստել, որ այդ իմաստով ևս Կոմիտասի գործը գերազանցել է զուտ երաժշտական ոլորտների սահմանները:

Երբ Կոմիտասը ստեղծագործական ասպարեզ մտավ, հայ իրականությունն ապրում էր իր զարգացման քեկումնային փուլը: Բացվել էր ժողովրդի կենսական ուժերի զարբոնքը: Ինչպես հայտնի է, այդ ընթացքը ծայր էր առել 1828թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորվելու ժամանակից: Անխնա կեղերման դարերից հետո, երբ Հայաստանը, կորցնելով իր անկախությունը, հայտնվել էր Թուրքիայի և Պարսկաստանի բռնապետական լծի տակ, հայ ազգաբնակչության գոնե մի մասի համար վերջապես ստեղծվեց առավել կամ նվազ քնականոն կեցության հնարավորություն: Վերելքն ընդգրկեց հասարակական կյանքի շատ քնազավառներ: Զար-

բոնք էր ապրում և Արևմտյան կամ, ինչպես ժամանակին ասվում էր, Տաճկահայատանը, որտեղ 19-րդ դարի կեսերից ավելի ու ավելի ուժգնորեն էր բռնկվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի հուրը:

Մեծ թափ առավ հատկապես գրականությունը: Ակաած հայ նոր գրականության և նոր աշխարհաբար լեզվի հիմնադիր Խաչատուր Աբովյանից, հանդես եկան մի շարք առաջնակարգ գրողներ, բանաստեղծներ, բատերագիրներ, որոնք նշանակալի դեր խաղացին Հայաստանի մշակութային զարթոնքում: Գրականության արգասավոր զարգացումը կարելի է բացատրել ոչ միայն մյուս արվեստների շարքում նրա գրաված առաջատար դիրքով: Ոչ պակաս կարենք նշանակություն ուներ նաև ազգային գրական ավանդույթների ժառանգականությունը, որը գրեթե միշտ պահպանվում էր հայ գրականության մեջ: Նույնիսկ ամենամռայլ ժամանակներում, եթե Հայաստանի վրա խալվարն էր իշնում, և թվում էր՝ կանգ էր առնում ամեն կենդանություն, ժողովրդի ստեղծագործ միտրը չէր մարում: Ապահով գոյության որոնումներում հայրենիքից հեռացած հազարավոր պանդոխտների հետ միասին այն ապաստան էր գտնում օտարության մեջ: Հայաստանի սահմաններից հեռու ստեղծվում էին մշակութային օջախներ, որոնցից մի քանիսը դառնում էին ազգային լրաավորության կենտրոններ: Վենետիկ, Կալկարա, Վիեննա, ապա Թիֆլիս, Կոստանդնուպոլիս, Մոսկվա, Փարիզ, Պետերբուրգ՝ ահա այն քաղաքներից մի քանիսը, ուր ոչ միայն խնամքով պահպանում, այլև հնարավորինս շարունակում էին զարգացնել գրի ու գրականության ազգային ավանդույթները:

Այլ էր մասնագիտական երաժշտության ճակատագիրը: Ավանդույթների ժառանգորդությունն այստեղ, ըստ էության, խըզված էր: Արդեն 18-րդ դարի սկզբին (հնարավոր է և շատ ավելի վաղ) կորել էր խազերի քանակին. խազեր Հայաստանում կոչվում էին այն հատուկ նշանները, որոնց օգնությամբ գրանցվում էին երաժշտական ստեղծագործությունները: Անվերծանելի դարձած խազերի գաղտնիքի հետ փակված մնաց

ազգային երաժշտական մշակույթի վիթխարի մի շերտ<sup>1</sup>: Այնինչ դատելով այդ մշակույթի մեջ հասած բեկորներով (նշանակալի մասով պահպանված Կոմիտասի ջանքերի շնորհիվ), դա հասել է բարձր զարգացման և հատկանշվել աներկրա գեղարվեստական կատարելությամբ: Հայ միջնադարյան երաժշտության փայլուն վերելքի ժամանակաշրջանը 10-14-րդ դարերն են և ըստ Ա.Շահվերդյանի հեղինակավոր նկատման. «Նրա զարգացումը առանձին փուլերում ակնհայտ է, որ նշանակալիորեն գերազանցում է Եվրոպական մշակույթների զարգացումը և անհրաժեշտ լրացում է ներդնում մոնողիկ (միաձայն -Գ.Գ.) երաժշտության ժանրերի տեսակների և երևույթների ընդհանուր պատկերում»: Սակայն այնուհետև տիրում է ժամանակավոր դադարի և նկատելի անկման դարաշրջանը: Խազային ձայնանիշերի կորստի փաստն ինքնին պերճախոս, բայց և ոչ միակ վկայությունն է այն բանի, որ Հայաստանի կյանքի արագընթաց վատքարացող տնտեսական, քաղաքական և հասարակական պայմաններում անհետանում էին բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու ազդակները բարձր զարգացած մասնագիտական երաժշտական մշակույթի գոյության համար: Սա դարձավ ավելորդ շրենություն, ուստի և պետք է իշներ բեմից:

Բնական է, որ հայկական երաժշտությունը դուրս մնաց այն հզոր նորոգող շարժումից, որը Եվրոպայում կապված էր մասնագիտական երաժշտական արվեստի ողջ բնույթի արմատականորեն փոխած բազմաձայնության ավշեցուցիչ ծաղկման հետ: Բազմաձայն երաժշտության զարգացումը ներադրում էր երաժշտական կյանքի կատարելավես նոր և շատ ավելի բարդ ձևեր, որն անհնարին էր առանց երգչախմբային և գործիքային խոշոր խմբերի, օպերային թատրոնների, մասնագիտական երաժշտական կրթության ճյուղավորված ցանցի առկայության: Հայ երաժշտական արվեստը, իհարկե, իր տրամադրության տակ նման անհրաժեշտ նյութական հիմք չուներ ո՛չ բուն Հայաստա-

<sup>1</sup> Միայն Մատենադարանում (Ճեռագրերի պետական գրապահոցը Երևանում) հաշվվում են հազարից ավելի ճեռագրեր՝ խազային ձայնանիշերով:

նում, ոչ էլազգային մշակութային այն օջախներում, որոնք կազմավորվում էին նրա սահմաններից դուրս: Հայկական երաժշտության արհեստական մեկուսացումը շարունակվում էր մինչև անցյալ դարի 60-ական թվականները: Բայց այդ պահից իրադրությունը անակնկալ և կտրուկ փոխվեց: Ազգային երաժշտության նորոգման ընթացքը սկսվեց բուն, զրեթե ինչ-որ տենդագին փորձկոտությամբ: Ինչպես և պետք էր սպասել, մասնագիտական երաժշտական կյանքի վերածնունդը սկիզբ առավ այն քաղաքներում, որոնք այդ ժամանակաշրջանում վերածվել էին ազգային մշակույթի խոշոր կենտրոնների: Արդեն 1868թ. Կոստանդնուպոլսում երաժշտահան Տ. Չոխաջյանը ստեղծում է հայկական առաջին օպերան՝ «Արշակ Երկրորդը»: Այստեղ էլ նրա նախաձեռնությամբ կազմակերպվում է երաժշտական ընկերություն, իրատարակվում են երաժշտական հանդեսներ, ստեղծվում է սիմֆոնիկ նվագախումբ: Դեկավարելով երաժշտա-քառական խումբը, որը բեմադրում էր նաև իր երաժշտա-քենական ստեղծագործությունները՝ Չոխաջյանը մեծ հաջողությամբ երևյներ է ունենում Թուրքիայի, Սերծավոր և Միջին արևելքի քաղաքներում:

Առաջին վերսլացը այդ ժամանակաշրջանը տևեց միայն 10 տարի: 1878թ. բեղինյան հաշտության պայմանագիրը ծանր հարված հասցրեց Տաճկահայատանում հայերի ազգային ազատագրության հույսերին: Խոկ սուլթան Արդուլ Համիլի գահակալությամբ սկիզբ դրվեց արյունոտ բռնություններին և ազգային մշակույթի յուրաքանչյուր դրսւորման անխնա հալածանքին: Բանտում վախճանվեց Ե. Տնտեսյանը՝ լուսավորյալ սակավարիկ երաժիշտներից մեկը: Տ. Չոխաջյանը, զրկված իր գործունեությունը շարունակելու ամեն մի հնարավորությունից, իր վերջին տարիներն էր անցկացնում Իզմիր քաղաքում՝ հուսահատ պայքարելով ընչագրկության և խսպան մոռացության մատնվելու դեմ: Կոստանդնուպոլսում երկար ժամանակով դադար առավ հայ երաժշտական կյանքը: Ազգային արվեստի զարգությին նոր բռնկումը, կապված Կոմիտասի այստեղ գալու հետ, եղավ շատ կարծ և 1915-ին մարեց, այս անգամ արդեն

ընդմիշտ:

Անհամեմատ երջանիկ ճակատագիր վիճակվեց Ռուսաստանի տարածքում ապրող հայ երաժիշտներին: 80-ական թվականների սկզբից այստեղ ծավալվեց ականավոր երաժիշտլուսավորիչ Ձ. Կարա-Մուրզայի գործունեությունը: Նա հասկանում էր, որ եվրոպական երաժշտական ձևերի նորքը ծիլերը հայկական միջավայրում կարող են պատվաստվել, զանգվածային երաժշտական կենցաղում ամուր արմատներ ձգելով միայն: Նա համակված էր այդ կենցաղի արմատական վերափոխման իդեերով: Նրա հետապնդած սևոռուն զաղափարը բազմածայնության տարածումն էր: Նրա հիմնական գործիքը երգչախմբային արվեստն էր, իրքի առավել մատչելի և ժողովրդավարական՝ տվյալ պայմաններում: Անսպառ եռանդի և հասարակական խառնվածքի տեր մարդ՝ Կարա-Մուրզան ամբողջապես անձնատուր եղավ իրեն համակած զաղափարին: Նա շրջագայում էր այն բաղաքներում ու ավաններում, ուր ապրում էր հայ ազգաբնակչություն և ամենուրեք կարճ ժամկետներում կազմակերպում էր երգչախմբեր: Ծանոթ մեղեդիների՝ բազմածայն հնչողության անսովոր բնույթը (գոյություն ունեցող հայկական բաղաքային և գյուղական երգերը երգչախմբի համար մշակում էր ինքը՝ Կարա-Մուրզան) հրապուրում էր մարդկանց: Համերգների նախապատրաստությունը և բուն խոկ համերգները անցնում էին համընդհանուր խանդակառության մթնոլորտում: Գավառական խով բաղաքներում տղամարդկանց հետ միասին թեմ էին ելնում նաև կանայք (հակառակ Արևելքում հաստատված ավանդույթների): Եվ սա նույնական ներկայացնում էր արտասովոր հոգիչ մի պատկեր: Կարա-Մուրզայի երգչախմբային համերգները հիացական ընդունելություն էին գտնում: Կարա-Մուրզայի աշակերտներն ու հետևորդները շարունակեցին նրա սկսած գործը: Բազմածայնության հաղբանակը ակնհայտ դարձավ:

Երկար տատանումներից հետո հայկական եկեղեցին ևս վճռեց դիմել բազմածայնությանը: Նա օգտվեց Եկմալյանի «Պատարագի» բազմածայն մշակումից, որն արված էր տա-

դանդով, անուրանայի գեղարվեստական որակով: 1896թ. Եկմալյանի «Պատարագը» հրատարակվեց Լայպշիգում և այդ ժամանակվանից ստացավ եկեղեցու պաշտոնական ճանաչումը: «Պատարագի» առաջին կատարումները ինքնատիպ համերգների բնույթ ունեին՝ դեպի եկեղեցի գրավելով ունկնդիրների մեծ բազմություններ:

Սոտափրապես նույն տարիներին երևան եկան Ն. Տիգրանյանի մուղամների<sup>1</sup> գործիքային առաջին մշակումները: Դրանք կարևոր պատմամշակութային նշանակություն ունեին: Դրանց շնորհիվ Արևմուտքը առաջին անգամ ծանոթացավ Արևելքի երաժշտական մշակույթի ամենավառ դրսեորումներից մեկին: Մյուս կողմից դրանք տեղացի ունկնդիրին մատուցում էին ծանոթ, մանկությունից յուրացված մեղեղիական նյութի վրա եվրոպական հարմոնիայի ճաշակը, տիպիկ եվրոպական գործիքների բուն հնչողությունը (Տիգրանյանի վաղ մշակումները գրված էին դաշնամուրի և ջութակի համար):

Հարկ չկա հիշել Կոմիտասի բոլոր նախորդներին: Կարևոր է նշել, որ առաջին հայ մասնագիտացած երաժշտահանները, կրթություն ստանալով Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի<sup>2</sup> երաժշտական կենտրոններում, ձգում էին հայ իրականության սեփականությունը դարձնել եվրոպական երաժշտական մշակույթի նվաճումները: Նրանց ջանքերն ուղղված էին եվրոպական երաժշտական տեխնիկան հայկական (ավելի լայն՝ արևելյան) երաժշտության փորձի հետ «օրինական ամուսու-

<sup>1</sup> Մուղամները Արևելքում լայնորեն տարածված վոկալ-գործիքային կամ գործիքային ստեղծագործություններ են: Մուղամների արվեստի պատմությունը դարերի ընթացքում հասել էր մեծ կատարելության: Այդ համարենելյան ժանրի զարգացման գործում անհերքելի ավանդ են ներմուծել և հայ երաժիշտները: Հայ ազգաբնակչության մեջ տարածված և մինչև այժմ գոյություն ունեցող մուղամներն ունեն իրենց տարրերակվող գծերը:

<sup>2</sup> Մ. Եկմալյանն ավարտել էր Պետերբուրգի կոնսերվատորիան Ն. Ռիմսկի-Կորսակովի դեկանարարականը: Տ. Չոխաջյանը երաժշտություն ուսանել էր Միլանում, Ն. Տիգրանյանը՝ Վիեննայում, այնուհետև Պետերբուրգում, Ք. Կարա-Մուրզան՝ Օդեսայում:

թյան» կապերով միացնելուն: Այդ փորձի ներքո հասկացվում էր այն ժամանակ կենցաղում (առավելապես քաղաքային) հընչող երաժշտությունը: Իսկ դա քավականին խայտարդես ու քահաճ պատկեր էր ներկայացնում: Այստեղ հնչում էին և՝ պատահաբար տեղ գտած գեղջկական երգեր, և համարենելյան գործիքային երաժշտության տարրեր տեսակներ՝ սազանդարների գունեղ կատարմամբ, արմատավորվում, մշակվում էր աշուղների արվեստը, ծնունդ էին առնում նաև նոր, զուտ քաղաքային երգեր՝ արևմտյան, եվրոպական նմուշների ակնհայտ հետքերով: Ամենատարրեր ազդեցությունների այդ կենդանի, հարավովովի քուրայում երաժշտի զգայուն ականջը կարող էր, այնուամենայնիվ, առանձնացնել թեև տարատեսակ ներգործությունների ենթարկված, սակայն համենայն դեպք իր ակնհայտ ազգային բնույթը պահպանած երաժշտական երևույթներ: Առավելապես դրանց վրա էին հիմնվում (ավելի շուտ բնազդորեն, քան զիտակցաբար) հայ առաջին երաժշտահանները՝ զարգացնելով վերածնվող մասնագիտական հայ երաժշտության ազգային յուրահատուկ գծերը:

Գրեքե նույնը կարելի է ասել եվրոպական երաժշտական տեխնիկայի հանդեպ նրանց ունեցած վերաբերմունքի մասին: Ե՛վ իրենց ուրույն ստեղծագործության մեջ, և ժողովրդական, լայն տարածում գտած մեղեդինների մշակումներում նրանք օգտվում էին եվրոպական երաժշտության մեջ արդեն իսկ կայունացած արտահայտչամիջոցների զինանոցից՝ երբեմն նըրբորեն ընտրելով այն, ինչ կարող էր ավելի վառ ընդգծել ազգային երաժշտական պատկերների յուրահատկությունը, սակայն, հիմնականում ճգտելով «հաշտեցնել» իրենց երաժշտության ինքնատիպ կերտվածքը եվրոպական երաժշտական մտածողության զերիշխող ընդհանուր կանոնների հետ:

Ըստ Էության, միանման ուղիներով էին զարգանում և ազգային մյուս մշակույթները, որոնց «մուտքը բարձր հասարակություն» և արագ վերելքը վճռորոշ դեր խաղացին 19-րդ դարի աշխարհի ողջ երաժշտական քարտեզի բարեփոխման մեջ: Եվրոպական երաժշտության ավանդական ընդհանուր կանոնների հետ:

Աերի հեղինակությունն այնքան մեծ էր և անվիճելի, որ դրանց հիմնիվեր վերափոխման գաղափարը կարող էր ծնունդ առնել ավելի քան համարձակ ու հանդուզն ուղեղներում: Իսկ նման մտքի տեր անհատներին, ինչպես հայտնի է, մարդկությունն աշխարհին պարզեցում է ոչ այնքան հաճախ:

Ահա սա էր համառոտ ուրվագծված, այդ իսկ պատճառով շատ ընդհանուր պատկերը հայ երաժշտության վիճակի, որի ականատեսը եղավ Կոմիտասն իր ստեղծագործական ճանապարհի սկզբում:

## 2

Հայրենի երգ մեր վսեմ,  
Հազարամյա մեր հաճար ...

*Ե.Չարենց «Requiem aeternam Կոմիտասին»*

Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան) ծնվել է 1869թ. սեպտեմբերի 26-ին Անատոլիայի (Թուրքիա) կենտրոնում գտնվող Կուտինա (Քյորահիա) քաղաքում: «Սողոմոնյաններն ու քյորահիացի հայ հին ընտանիքները,- գրում է Կոմիտասը ինքնակենսագրության մեջ,- զադքել են 17-րդ դարու վերջում Գողբն զավադի Ցղնա գյուղից»:

Նրա հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, կոչկակար էր: Կենսուրախ, դյուրահաղորդ մի մարդ, որ ընկերների հետ ուրախ ժամանակ անցկացնելու առիթը բաց չէր թողնում: Բավկական լավ նվազում էր քառ, հայտնի էր լավ ձայնով, և ինքն էլ երգեր էր հորինում: Իր մորը Սողոմոննը չէր հիշում. նա վախճանվել էր 17 տարեկան հասակում, երբ որդին դեռ մեկ տարեկան չկար: Ինչպես պատմում են, Կոմիտասի մայրը՝ Թագուհին, մելամադուտ քնավորություն ուներ և ամուսնու նման քնությունից օժտված էր երաժշտական ունակություններով: «Հորս ու մորս ազգատոհմն ի բնե ձայնեղ է: Հայրս ու հորեղբայրս հայտնի դպիր են եղել մեր քաղաքի Ս.Թեոդորոս եկեղեցում: Մորս և

հորս տաճիկ լեզվով և եղանակներով հորինած երգերը, որոնցից մի քանիսն արդեն գրել եմ 1893 թվին հայրենիքում, դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը», - վերիիշում է Կոմիտասը ինքնակենազրության մեջ:

Դժվար է պատկերացնել ավելի անորախ մանկություն, քան այն, որ բաժին էր ընկել Կոմիտասին: Հետազայում նա իր մանկությունը չէր սիրում վերիիշել. դա կյանքի այն ջնջված էց էր, որի մոտքը փակ էր նոյնիսկ նրա ամենամտերիմ մարդկանց համար:

Դասընկերների հուշերից հառնում է մի հիվանդոտ, գունատ տղայի կերպար՝ դեմքի մտասույզ ու մտահոգ արտահայտությամբ, աղքատ ու վատ հազնված, որի պատճառով էլ տառապում էր ձմեռվա սառնամանիքներին: «Նս վատ էր հազնվում, առանձնապես ձմեռը, երբ սառնամանիքին դպրոց էր գալիս ցրտից կապտած ու սառած ... Մենք մեր տակ բարձեր էինք դնում, բայց Սողոմոնը բոլորովին մերկ տախտակի վրա, ոտքերը տակն առած, դողալով կարդում էր և միշտ իր շնչով տաքացնում ցրտից սառած ձեռները», - գրում է նրա դասընկեր Ն. Միլտոնյանը:

Սողոմոնի կյանքն առավել դառնացավ հոր մահից հետո: 11 տարեկանում նա մնաց համարյա անօթեան: Ընկերները տեսնում էին նրան քնած լվացքատան կողքի քարերին և երբ կարողանում էին, տուն էին տանում: Ապրուստ հայրայթելուն նրան օգնում էր վճիռ ու զրնգուն ձայնը: «Թափառական փորձիկ երգիչ», այս անունն ամուր հաստատվեց նրա վրա Կուտինայում: Իր սրանչելի ձայնին էլ նա պարտական էր այն կարեռ իրադարձության համար, որ շուտով վիոլինց նրա կյանքի ընթացքը:

1881թ. տեղի վանահայր Դերձակյանը եպիսկոպոսի կարգ ստանալու համար պետք է մեկներ Եջմիածին: Հաստատված ավանդույթի համաձայն և կարողիկոսի խնդրանքով նա պետք է իր հետ բերեր մի «ձայնեղ» որք տղա՝ հոգեռոր ճեմարանում ուսում առնելու: Ընտրությունը կանգ առավ Սողոմոնի վրա: Ահա Կոմիտասի կյանքի առասպելական և միաժամանակ

միանգամայն արժանահավատ դրվագներից մեկը՝ ըստ Մարգարիտ Բաբայանի պատմածի<sup>1</sup>:

«Երբ նրան (Սողոմոնին) հասցնում են ս. Էջմիածին, Գևորգ Դ. կաթողիկոսը ցանկանում է տեսնել տղային ու շատ զայրանում է, որ երեխան քուրքերն է խոսում միայն (այդ ժամանակ-ները Կուտինա քաղաքում արգելված է եղել հայերեն խոսել): Տղան հանգիստ պատասխանում է.

- Հենց դրա համար էլ ինձ բերել են, որ հայերեն սովորեմ:
- Ապա ի՞նչ գիտես,- հարցնում է Վեհափառը:
- Երգել գիտեմ:

Եվ իր նուրբ, սրանչելի սոպրանո ձայնով երգում է հայերեն շարական<sup>2</sup> առանց մի բառ հասկանալու: Չափազանց զգացված կաթողիկոսի աշքերում արցունքներ երևացին: Նա խկույն կանչում է բարձր դասարանների աշակերտներին և հրամայում, որ անհապաղ հայերեն սովորեցնեն փոքրիկ Սողոմոնին: Ամեն կիրակի, Վեհափառի հրամանով, տղան պիտի երգեր տաճարում՝ նրա բազկարողի հետև կանգնած, ու կաթողիկոսը խոր հուզվում էր»:

Լեզվի հետ կապված դժվարությունները շուտով հաղթահարվեցին (հետագայում Կոմիտասը հայտնի էր իրք ինչպես նոր, այնպես էլ հին հայերենի՝ գրաբարի գիտակ): Հաջողությամբ էին ընթանում նաև մյուս առարկաների, այդ բվում և նոր հայկական նոտագրության<sup>3</sup> տիրապետման պարապմունքները: Բացադիկ երաժշտական ձիրք ցուցաբերած պատանի Սողոմոննը շրջապատված էր հատուկ ուշադրությամբ, և եկեղեցին մեծ հույսեր էր կապում նրա հետ: Ուշագրավ է, որ 1893թ. ճեմարանն ավարտելու և հոգևորական առաջին՝ սարկավա-

<sup>1</sup> Մարգարիտ Բաբայանը (1885-1968) հայտնի երգչուիի էր, ապրում էր Փարիզում: Կոմիտասի մերձավոր բարեկամն ու նրա ստեղծագործությունների անխոնջ տարածողը:

<sup>2</sup> Շարական - օրիներգային բնույթի հայկական հոգևոր երգասացություն:

<sup>3</sup> Հայկական նոր նոտագրությունը 19-րդ դ. սկզբին երաժշտական գործի մեջ ներմուծեց Հ. Լիմոնճյանը: Գծապատկերով Լիմոնճյանի համակարգի նշանները նման էին հինավոր խազերին, թեև նրանց հետ ընդհանուր ոչինչ չունեին:

զի աստիճան ստանալու կապակցությամբ նրան տրվեց 7-րդ դարի նշանավոր քանաստեղծ, և, ինչպես ավանդությունն է ասում, շարականների մեղեղիների առաջին հեղինակներից մեկի՝ Կոմիտաս կաթողիկոսի անունը: Ծիշտ է, Կոմիտասը կաթողիկոս չդարձավ: Երկու տարի անց նա օժվեց հաջորդ՝ վարդապետի հոգևոր աստիճանով, որով իսկ ավարտվեց նրա վերընթացը եկեղեցական կարգավետական սանդուղքով: Բայց իր նախորդ մեծ անվանակցի գեղարվեստական ծիրքը նա ժառանգել էր լիապես:

Ենթարանի սան լինելով, Կոմիտասը մոտիկից առնչվեց հայ եկեղեցական երաժշտության աշխարհին: Նրան գերեց դարերի խորքից եկած եղանակների զուսպ և հանդիսավոր զեղցկուրյունը՝ մեկ հոգավառությամբ լեցուն, մեկ ասես մշուշած վերերկրային խորհրդավոր լույսով: Նա ոչ միայն ինքն էր հրաշալի երգում եկեղեցական երգասացությունները, այլև մանրակրկիտ գրանցում էր դրանք, համեմատում, ուսումնասիրում: Իր առաջին պատանեկան դիտումների արդյունքները նա ընդհանրացրեց «Հայկական եկեղեցական մեղեղիներ» մեծ հոդվածում՝ հրատարակված Եջմիածնի «Արարատ» հանդեսում 1894թ.:

Բայց երբեմնի «քափառական երգչի» հոգին ծարավի էր և բոլորովին այլ երաժշտական տպավորությունների: Շրջապատող իրականությունը տալիս էր բոլոր հնարավորությունները՝ այդ ծարավը հագեցնելու համար:

Եկեղեցական տոններին (իսկ դրանք քավական հաճախ էին լինում տարվա մեջ) Եջմիածին էին զալիս քազմաքիվ ուխտավորներ: Առավոտից զունայի և դիոլի ձայնները թնդացնում էին ողջ շրջակայքը: Ամենուրեք երևում էին ազգային զունեղ տարազներով գեղջուկների խմբեր: Դժվար է ասել՝ կրոնական հաջ զգացումներ էին բերում նրանց այստեղ, և կա՞ր արդյոք, ընդհանրապես, կրոնական որևէ քան նրանց զգացումներում: Չոհաքերության ծեսերն ու դրանց ուղեկցող աղմկոտ ուրաքնությունն ավելի շատ աշխարհիկ և նույնիսկ հեթանոսական բցույթ էին կրում: Իսկ ավելի հավանական է՝ սերնդեսերունդ

ավանդաբար փոխանցվող այդ ծեսերը լավագույն առիթ էին՝ զարդարելու գյուղական միապահաղ կյանքի տիտուր առօրյան։ Երիտասարդական պարերում ու խաղերում սկիզբ էին առնում գեղջկական ապագա «աիրավեպերը»։ Արևն ու գինին բորբոքում էին արյունը։ Միմյանց հաջորդող երգերում հոգիներն էին թեթևացնում։ Իսկ պարերին տրվում էին ամենայն լրջությամբ և ինքնամոռաց թափով։ Պատանիները, շրջան կազմած, ուս ուսի, հմայելու չափ միալար մեղեդու ներքո պտտվում էին անշտապ ու կենտրոնացած։ Մի փոքր բարձրացնելով մեկ աջ, մեկ ձախ ուժքը, նրանք պտտվում էին աստիճանաբար արագացող թափով՝ մինչև կատարյալ ուժասպառություն՝ խենք հըրճվանքով ասես ոտնատակ տալով անվեհեր խիզախության տեսնանքի մշտատանց թախիծը։

Պատանի Կոմիտասին անշափի գրավում էր ժողովրդական կյանքի, ժողովրդական խնդության տարերքը։ Զանալով աննկատ մնալ, բարձնված՝ նա ժամերով ուսկնդրում էր ժողովրդական երգերն ու պարերը։ Դրանց մեղեդիները մշարճվում էին իիշողության մեջ և որպես անտես ուղեկիցներ՝ դեռ երկար ժամանակ նրա հետ էին։ Շատ չանցած, Կոմիտասը սկսեց գրի առնել ժողովրդական մեղեդիները։ Երաժշտական բացառիկ լսողությունը բույլ էր տալիս նրան այդ անել ճշգրտությամբ և կատարյալ։ Գրառելիս նա օգտվում էր հայկական նոտագրությունից, որը հնարավորություն էր տալիս այդ պահին տեղում, համարյա սղագրական արագությամբ արձանագրել ամենաբարդ, կշռույթի ու մեղեդիկան նախշերի առումով անսովոր ժողովրդական եղանակները։ Նա կարող էր ճշգրտորեն վերարտադրել ամեն մի պարի յուրաքանչյուր շարժում՝ թե՛ կանացի, թե՛ տղամարդկանց։ Ինչպես պատմում է նրա ժամանակակից Հրաչյա Աճառյանը (հետագայում խոշորագույն լեզվաբան, ակադեմիկոս), Կոմիտասը «Ճեմարանի ուսուցիչներու մեջ հայտնի ժողովրդական պարող էր։ Տղամարդկանց խիզախ, խրոխս շորորեն, ծանր ճոճումներով և մարտական սուրով, մինչև շնչական կանանց պարերը, իրենց ձայնի հարազատ ելեկջներով և մարմնի ու ձեռքերու նուրբ արտահայտություններով առ-

հավետ անմոռանալի կմնան»:

Հետագայում դաշնամուրային ճանրանվագների շարքի մեջ Կոմիտասը վեհաշունչ բանաստեղծականությամբ վերարտադրեց ժողովրդական պարային արվեստի գեղեցկությունն ու բազմազանությունը:

Ժողովրդական մեղեղիների գրառումը Կոմիտասի համար սիրելի զբաղմունք դարձավ, նրա ամենամեծ իրապուրանքը, նրա կիրքը: Նա այլև չէր գոհանում նրանով, ինչ լսում էր Եջմիածնում: Նա սկսեց տառացիորեն «որսալ» ժողովրդական նոր եղանակներ՝ հասնելով ամենախուլ ու հեռավոր գյուղերը: Գեղջուկներն արդեն լավ ճանաչում էին նրան և ներողամը-տորեն էին վերաբերվում «խաղ ասող վարդապետի», ինչպես նրանք անվանում էին Կոմիտասին, տարօրինակ քմահաճույքներին: Կոմիտասն արդեն կարող էր առանց երկյուղելու, թե իր ներկայությամբ կխաբարի ժողովրդական կատարողների ստեղծագործական ներշնչանքը, անմիջականորեն հետևել ժողովրդական արվեստի ամենատարբեր դրսերումներին: Հոգեվոր կոչումը օգնում էր բափանցել նույնիսկ այնտեղ, որ ուրիշները մուտք չունեին: Նա կարող էր անմիջաբար մասնակցել հարսանիքներին, կնունքներին և մյուս ժողովրդական ծեսներին, որոնց խստորեն սահմանված, համարյա արարողակարգային կանոնները հաճախ բացառում էին կողմնակի անձանց ներկայությունը:

Աստիճանաբար Կոմիտասի առջև բացվում էր ժողովրդական արվեստի աշխարհն իր ողջ խորությամբ ու հարատությամբ: Քիչ առաջ անցնելով, քանզի ժողովրդական երաժշտության մասին այդպիսի հստակ բանաձևմամբ մտքերը նրա հոդվածներում երևան եկան շատ ավելի ուշ, քերենք մի քանիսը նրա ասույթներից: Սկսնք հետևյալից: «Ոչ մի բան ժողովրդի զգայարաններից խուսափել չի կարող. դրա համար էլ խստ բազմապիսի են ժողովրդի ստեղծագործության արդյունքները» («Մի բռուցիկ ակնարկ ...» ձեռագրից):

Ժողովրդական արվեստի աշխարհում անսովոր շատ բան կար: Այստեղ գործում էին իրենց կանոնները, իշխում էին ի-

թենց օրենքը երը: Ժողովրդական երաժշտությունն անտեսանելիորեն միահյուսվում է կյանքին, գեղջուկի կենցաղին: Երաժշտությունն այդ կյանքի անբաժանելի մասն էր, «նրա ամենաառաջին անհրաժեշտությունը, ինչպես հացն ու ջուրը» (Կոմիտաս):

«Չատ դժվարությունով կամ ամենեւին չեն երգում, - նկատել է Կոմիտասը, - ծաղը են անում, երէ մի զյուղացի խնդրէ, որ, օրինակ, մի շինական երգ ասեն, երբ գործի չեն, այն էլ՝ տանը:»

Ժողովուրդն արվեստական երգեցողութիւն ասած քանը չգիտէ. իրաքանչիւր երգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում - գործի ժամին՝ գործի երգ, տանը՝ տանու երգ միայն կ'ասեն: Ոչ մի զիւղացի, տանը նստած, կալի երգ չի ասի. որովհետեւ կալերգն ստեղծելու եւ ասելու տեղն է կալը, ուստի շատ օտարուի է երեսում, թէ ինչու են հետաքրքիր լինում մի երգով, երբ անտեղի եւ անյարմար ժամանակ է:

Իրաքանչիւր երգ կապուած է զիւղական կեանքի մեկ րոպէի հետ եւ տախս է միայն այդ րոպէի հաշիւը: Ժողովուրդը ժամանակից եւ տեղից բաժան երգ չի հասկանում, չի ստեղծում եւ չի էլ գործածում»:

Գրականության մեջ հազվադեպ են երգի ծնունդ առնելու վերաբերյալ այնպիսի դիտարկումներ, որ արել է Կոմիտասը «Հայ գեղջուկ երաժշտություն» հոդվածում. «Ես արդէն, բուրքն ու մատիտը պատրաստ, դուրս էի եկել շինութեան սալահատակ տանիքը եւ սպասում էի նոցա զալուն: Այս անգամ ներկայ էի հենց սկզբից. ուրիշ անգամներին հնար չէր լինում, որովհետեւ պար բռնելն սկսում են զիշերով, իսկ ես հասնում էի եւ պատրաստ երգեր էի լսում: Տեսայ եւ զգացի, թէ որքան սխալուել եմ: Առաջ-առաջ մի չորս հոգի եկան: Պարը բոլորեցին: Մի երկու շրջան, լուռ, բայց համաշափ քայլով, դեպի աջ, որպես սովորոյք եւ խաղի սկզբին, պտույտ արին: Միջի լավ խաղ ասողն սկսեց երգել այս կրկնակով.

*Աման Թելլօ, Թելլօ,  
Սիրուն Թելլօ, Թելլօ»:*

Կոմիտասը մանրամասն նկարագրում է, թէ ինչպես աստի-

ճանաբար ընդլայնվում էր պարերզի մասնակիցների շրջանը, և քառյակից քառյակ փոխվում և կատարյալ էր դառնում հիմնական մեղեղին: Վերջապես շրջան է մտնում գյուղի լավագույն երգասացուին և իր սեփական տարբերակի կատարմամբ հենց նոր հորինված երգին հաղորդում գեղարվեստական փայլ ու ավարտուն տեսք:

«Գիտում ամենը էլ, լաւ կամ վատ, երգել գիտեն, որովհետեւ մասնակից են երգաստեղծութեան կամ երգասութեան, - ավարտում է իր միտքը Կոմիտասը: - Բայց եւ ոչ մեկը չգիտէ, թէ ո՞վ է կապել խաղը, որովհետև բոլորը միասին են հիւսում: Ո՞չ մեկը չգիտէ, թէ որտէ՞ն է հիւսել, որովհետեւ խաղ ստեղծել կարելի է ամեն տեղ: Ո՞չ մեկը չգիտէ, թէ ինչպէս է յօրինել որովհետեւ երգաստեղծութիւնն ինքնարեր կարողութիւն է: Ո՞չ մեկը չգիտէ, թէ երգ է հնարել, որովհետեւ իրաքանչիւր բովէ հետք բերում է նոր տրամադրութիւն: Մեկն առիթ է տալիս, միաը՝ նիւթ, մեկը մի միտք է յղանում, միաը ձեւակերպում է եւ տեղնուտեղը, վայրկենական տպատրութեան եւ ազդեցութեան տակ: Խօսքն ու ծայնը, բանաստեղծութիւնն ու երաժշտութիւնը, իբր երկուորեակ քոյրեր, բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից, բնազդաբար եւ առանց կանխակալ նախապատրաստութիւն ունենալու: Իրանց միջի նուրբ ճաշակի տէր անձն էլ կոկում է բնականաբար, տեղական դրոշմ դնում եւ գեղջուկի բուն ոգին վառ գոյներով պայծառացնում»:

Հանպատրաստից երգաստեղծումները, ինչպէս տեսնում ենք, ծնունդ են առնում թերեւորեն և անկաշկանդ: Ստեղծագործական այդ ազատությունը միայն երգաստեղծման մասնակիցների հայտնի գեղարվեստական հմտությունների վկայությունը չէ: Դա անհնարին կլիներ, եթե հանպատրաստից երգաստեղծումը չիհննվեր երաժշտական մտածողության որոշակի տրամաբանության վրա, որը կազմավորվել և ձևավորվել էր դարերով և ասես մոր կարի հետ ներծծվել յուրաքանչյուր հաջորդ սերնդի կողմից: Երգի ծննդյան այս «քերեւորյան» թիկունքում կանգնած էր մի ամբողջ զարգացած երաժշտական համակարգ, որի ինքնատիպ գծերը դեռ պետք է հայտ-

նազործեր Կոմիտասը: Երգաստեղծման նման ձևերը վերաբերում էին ամենազանգվածային, լայնորեն տարածվածների թվին: Դրանք ասես տեղադրված էին ժողովրդական արվեստի մակերեսին: Սակայն ժողովրդի մեջ ապրում էին նաև երգարվեստի՝ գեղարվեստական հարստության ու բարդության առումով բացառիկ նմուշներ: Ամեն որ չէ, որ կարող էր դրանք կատարել շափազանց փոքրաթիվ գիտակների էր դա վիճակված, որոնց «մատով էին ցույց տալիս» (Կոմիտաս): Հենց նրանցից էր գրի առնում Կոմիտասը աշխատանքային, վիպական, ծիսական, բնարական երգերի առավել կատարյալ տարրերակները:

Կոմիտասի «Լոռվա գուրաներգ» նշանավոր հոդվածում մեր առջև ասես տեսանելիորեն հառնում է ժողովրդական երգարվեստի այդպիսի բարձրագույն նմուշներից մեկի կենդանի հնչողության պատկերը:

Լոռիում, մինչև Կոմիտասի ժամանակները պահպանված ավանդույթի համաձայն, հողը հերկում էին ծանր, հնամենի գութանով: Որպեսզի հաջող անցկացվեր հերկը, մի քանի ընտանիքներ միանում էին աշխատանքային խմբի մեջ՝ ընտրելով իրենց միջից գլխավոր հերկվորին, մաճկալին, որը նաև հոռովելի առաջատար երգողն էր:

Վարը սկսվում էր երեկոյան: Արագորեն խտացող մքընշաղն իր հետ տանում էր ցերեկվա աղմուկն ու առօրյա հոգսերը: Բնության անդորրը մտնում էր իր իրավունքների մեջ, և մաճկալի սիրտն արդեն զգում էր նրա հավերժական շունչը: Հասնում էր այն խորհրդավոր ու սրբազն պահը, երբ առաջին ակոսը պետք է արթնացներ հողի նիրհած ընդերքը: «Խորհրդաւոր ու պաշտելի գաղտնիք. շինականը բնութեան գրկում, բնութիւնը շինականի սրտում վերստին ու միաժամանակ ծնունդ են առնում» (Կոմիտաս): Գեղջուկի զգացմունքները ծայրաստիճան լարված են, ցնծությամբ է լցվում «զիւղացու սիրտը, նրան ուժ ու աշխոյժ տալիս եւ յոյս՝ կրկին մեկ տարվա պաշարի»:

Աստծուն ուղղված երախտագիտության խոսքերի հետ միաժամանակ ծանր խոփը պատռում է հողի կուրծքը: Գեղջուկների

Չանքերը թևավորում է պայծառ ու հզոր երգը: Ահա վարի դրվագներից մեկը Կոմիտասի գունեղ նկարագրությամբ.

«Երբ այսպէս «Օխնելի Աստոծն» ու «Յիշելի Աստոծն» իր սարօր ասում-պրենում են, ասագ հոտաղն իջնում է եզների ուսից, դուրս է գալիս լծի միջից, փորք-ինչ հեռանում է գութանից ու ձախ ձեռքն ականջին դնելով եւ աջովը ճիպոտը շարժելով երգում է՝

*Գալիս է, գալիս է,  
Հա՛ - հա՞~  
ՄՇ, ծը՛լ - վրստ, ծը՛լ - վրստ,  
Ակը լալիս է:*

Եւ վագելով գնում, թռչում, ոստնում է լծի վրայ առանց երգելը դադարեցնելու, եւ բանաստեղծական այդ հրաշալի ժամին թե է առնում գութանը, թռչում ու իր հետը շունչ է տալիս Վեց հոտաղին, որոնք տասներկու լծկան են թշում, ցնծալով, եւ շրջակայ լեռներն ու ձորերը մեկ տեղ թնդալով»:

Վերադառնալով Կոմիտասի պատաճեկան տարիներին, չպետք է մոռանալ, որ այն ժամանակ նա գրեթե չէր ճանաչում եվրոպական երաժշտությունը: Նրան շրջապատող երաժշտական աշխարհին իր բնույթով բոլորովին այլ էր: Եվ այդ աշխարհը՝ հայկական ժողովրդական և հոգեւոր երաժշտությունը, հարևան արևելյան ժողովորդների երաժշտությունը, Կոմիտասը զիտեր ոչ թե իբրև սիրող, այլ իբրև նորաճաշակ մասնակտ: Ժողովրդական երգերը նա սկսել էր գրի առնել արդեն 15-16 տարեկանից: 1895թ. նրա հրապարակած Ակնի ժողովրդական երգերի ոչ մեծ ժողովածուն առանձնանում էր զրատան անթերի ճշգրտությամբ և զիտական ակնառու արժեք էր ներկայացնում:

Եվ որքան էլ հետազայում հարստանար նրա երաժշտական-լսողական փորձը եվրոպական արվեստի զլուխգործոցների շնորհիվ, շրջապատող աշխարհը նրա ականջին հնչելու էր հարազատ ժողովովի երաժշտական պատկերներով: Աշխարհի այդ յուրահատուկ «ունկնդրման» մեջ է Կոմիտաս երգահանի

հետագա ստեղծագործության ձգողական ուժի, նրա գործերի խոր ինքնատիպության և նախաստեղծ բարմության հիմքերից մեկը:

Կոմիտասը եվրոպական երաժշտությանը առաջին անգամ նոտիկից շփվեց, հավանաբար, Էջմիածնի ճեմարանում գտնվելու վերջին տարիներին, երբ այնտեղ հրավիրվեց Ք. Կարա-Մուրզան՝ իրեւ երաժշտության ուսուցիչ: Եվրոպական բազմաձայնությանը ծանրութանալը շնորհալի պատանուն ցույց տվեց այն վիրխարի հնարավորությունները, որ բացվում էին ազգային երաժշտական մշակույթի առջև: Աստիճանաբար հասունացավ և երաժշտական կրթությունը շարունակելու միտքը, սակայն, նոր մակարդակով և նոր պայմաններում: Թողնելով ճեմարանի երաժշտության ուսուցչի թիչ թե շատ ապահով տեղը, որը նա գրադեցրել էր Կարա-Մուրզայի հեռանալուց հետո, Կոմիտասը նորից հանձնվում է «ուսանողական» կյանքի դժվարություններին:

Հայ կոմպոզիտորներից եվրոպական ըմբռնմամբ լուրջ կրթություն ստացած Մակար Եկմալյանի հետ պարապմունքները Թիֆլիսում Կոմիտասի համար դարձան եվրոպական երաժշտական տեխնիկային տիրապետելու մի յուրատեսակ նախերզանք: Հաջորդ քայլերն արդեն կապվում են Բեռլինի հետ, որը նա մեկնել էր ուսանելու՝ կարողիկոսի բարեխոսությամբ քոշակ ստանալով ազգային մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանցից:

Բեռլինը Կոմիտասի ստեղծագործական կենսագրության մեջ կարևոր փուլ էր: Ո՞չ նյութական դժվարությունները (քոշակը հազիվ էր բավարարում դասատուներին վճարելուն և նուտաներ ու զրբեր ձեռք բերելուն), ո՞չ ժամանակի սահմանափակությունը (ուսման ժամկետն ավարտվելուց դեռ շատ առաջ նրան մշտապես հիշեցնում էին ամենաշտապ կերպով Էջմիածին վերադառնալու անհրաժեշտության մասին) նրան չէին կարող խանգարել առավելագույն օգտագործելու այն հարուստ հնարավորությունները, որոնք տախս էր Բեռլինը՝ Եվրոպայի խոշորագույն երաժշտական կենտրոնը: Նա ընդունվեց

պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիան, որ անցնում էր երաժշտական-տեսական առարկաներ, կոմպոզիցիա, սովորում էր դաշնամուր նվագել: Միաժամանակ նա Կայսերական համալսարանում հաճախում էր փիլիսոփայության, երաժշտական գեղագիտության, ընդհանուր պատմության և երաժշտության պատմության դասախոսություններին: Բացի այդ, Կոմիտասը պարապում էր նաև վոկալի դասառուի հետ, մշակում իր ձայնը՝ գեղեցիկ հնչերանգով և չափազանց ճկուն հնարավորություններով օժտված բարիտոնը: Ուանելու առաջին խոկտարին բերեց մեծ հաջողություններ: Բացառիկ համեստ մարդ (Կոմիտասի բնավորության այդ գիծը իրենց հուշերում շեշտում են բոլոր ժամանակակիցներն անխտիր), նա, այնուհանդերձ, անսրող հպարտությամբ իր նամակներից մեկում գրել է. «Չափազանց գոհ եմ իմ ուսուցչապետից, որ այս մի տարվան ընթացքում ինձ այնքան առաջ տարավ երաժշտութեան մեջ առհասարակ, որքան վեց տարում չեն անցնում այստեղի պետական երաժշտանոցում անգամ»:

Բեռլինում մնալու հետագա երկու տարիները եղան նույնան լարված ու արգասավոր: Նրա ուսուցիչների շարքում էին ժամանակի հայտնի երաժիշտներ ու գիտնականներ Ռ.Շմիդտը, Օ.Ֆլայշերը, Մ.Ֆրիդենհերը, Գ.Բելլերմանը: Դատելով այդ ժամանակաշրջանում Կոմիտասի հեղինակած գործերից (Երկեր դաշնամուրի և լարային քառյակի համար, ոռմանսներ, աստվածաշնչյան թեմաներով «Առ գետս բարելացոց» խմբերգը), ինչպես նաև Պատարագի նրա առաջին մշակումներից մեկը՝ այսպես կոչված «Բեռլինյան պատարագը» նա արտասովոր արագությամբ և նպատակասաց տիրապետում է մասնագիտական անհրաժեշտ հմտություններին: Ծիշտ է, այդ հորինվածքները, ստեղծված համաեվրոպական երաժշտական ավանդույթների ընդունված հուսով, դեռևս թիշ բան են ասում Կոմիտաս երգահանի ապագա հանճարեղ կոահումների մասին:

Բեռլինում Կոմիտասը մոտիկից ծանոքանում է գերմանական երաժշտության դասականներին: Ժամանակակից կոմպոզիտոր-

Աերից նրան հրապուրում է հատկապես Վազները: Օպերային այդ հսկայի ստեղծագործությունն ավելի լավ հասկանալու համար նա նույնիսկ ժամանակավորապես ընդունվում է օպերային քատրոնի երգչախումբ՝ որպես երգիչ (բնականաբար, դա հայտնի շդարձնելով իր հոգեսր կոչման պատճառով):


Երեք տարին Բեռլինում անցավ աննկատ: Այդ ընթացքում նա ոչ միայն շատ բան իմացավ, այլև իր վրա հրավիրեց գերմանացի լրջախոհ երաժիշտների ուշադրությունը: Եվ նա հավասարի իրավունքով մուտք գործեց նրանց ընտանիքը: Իսկ նրա նվիրական սերը հարազատ արվեստի նկատմամբ, դատողությունների անկախությունը և Արևելքի երաժշտության լայնածավալ գիտելիքները խոր հարգանք էին հարուցում: Պրոֆեսոր Ռ. Շմիդտի կիսակատակ խոսքերում, որն իր աշակերտին անվանում էր «մոլեզին արևելցի, որ պատրաստ է ամեն մի նոտայի համար արյուն բափել», - բավական ստույգ է արտահայտվում համոզմունքների այն աննկուն ուժը, որով դեռ այն ժամանակ Կոմիտասը պաշտպանում էր իր հայացքներն արվեստի մասին:

1899թ. Կոմիտասը նոր ստեղծված Սիցազգային երաժշտական ընկերության հրավերով Բեռլինում դասախոսություն կարդաց՝ նվիրված հայ եկեղեցական ու աշխարհիկ երաժշտությանը: Դասախոսությունն այնքան մեծ հետաքրքրություն առաջացրեց, որ կրկնվեց: Դասախոսության մեջ Կոմիտասը մանրամասն կանգ էր առնում հայ երաժշտության առանձնահատկությունների վրա, համեմատության համար օգտագործելով օրինակներ պարսկական, արաբական, բուրքական, քըրդական երաժշտությունից: Դասախոսությունից հետո նրան նամակներով դիմեցին ընկերության նախագահ Օսկար Ֆլայշերը և քարտուղար դոկտոր Մաքս Զայֆերտը: Այդ նամակներում կրությունը նոր ավարտած երիտասարդ երաժշտի համար շափազանց շոյող գնահատականներ կան: Օ. Ֆլայշերը գրում էր.

«Իմ պարտք կիամարեմ Ձեզի, հանուն Սիցազգային երաժշտական ընկերութեան, շնորհակալութիւն հայտնել այն



Կոմիտասը Ս. Մելիքյանի և Ա. Շահ-Մուրադյանի հետ  
(1909թ.)



43927-1993

սիրահոժարութեան համար, որով Դուք Ձեր դասախոսութեանց միջոցով հայ երաժշտութեան մասին մեր ընկերութեան նպատակները կանխեցիք: Ձեր հմտալից եւ խորիմաստ դասախոսութեանց միջոցով խորունկ հայացք մը ձգել տվիր դէպի այն երաժշտութիւնը, որ մեզ համար ցարդ գրեթէ զոց էր, եւ որ մեզի՝ արեւմտեաններուս շատ բան ուսուցանել կարող է: Այն աշխատութիւնը, որուն դուք ձեռնարկած եք, փոքր չէ եղած, եւ ես խոսած կը լլամ հանուն այն ամենքին, որոնք ձեր դասախոսութիւնները լսեցին,- եւ որոնց մեջ կային առաջնակարգ նշանակութիւն ունեցող և գիտական աշխարհահռչակ մարդիկ, եթէ ըսեմ, թե Ձեր ջանքն ու ճիզք զուր չեն: Դուք արդի գիտութեան անգին ծառայութիւններ կարող եք մատուցանել, եթէ Ձեր աշխատութիւնները հրապարակեք, եւ այդ առքիվ եթէ կարողանամ օժանդակութիւնս ընծայել Ձեզի, մեծ ուրախութիւն մը պիտի զգամ:

Մեծագոյն հարգանոր, Ձեր անձնվեր՝  
Օսկար Ֆլայշեր»:

### 3

Երբեմն վրա է հասնում մի ժամանակ, երբ անհատ հանճարը, լայն մտահորիզոնով օժտված կազմակերպիչը, իր արվեստի տեխնիկայի իսկական տերը հայտնվում է զանգվածային ժողովրդական ստեղծագործության սնող կրծքից դեռ չկտրված վիճակում: Այդպիսի ժամանակները ստեղծում են գեղարվեստական մշակույթի խոշորագույն գործեր: Աստվածաշունչը, Հոմերոսի երգերը, Կալևալան, Էսքիլեսի ողբերգությունները՝ այդ ամենը քառսային, անշափելի, անհատակ ժողովրդական ստեղծագործության, այսպես ասած, հանճար-խմբագիրների արգասիրն է:

### Ա.Լունաչարսկի

1899թ. սեպտեմբերին Կոմիտասը վերադարձավ Էջմիածին և ստանձնեց ճեմարանի երաժշտության ուսուցչի ու երգչախմբի ղեկավարի պարտականությունները:

Նա եկավ հույսերով լի, ոգևորված հարազատ ժողովրդին օգուտ բերելու վսեմ ձգտումներով: Այդ ժամանակը նա վաղուց եր երազում, երազում էր դեռ հեռավոր Բեռլինում, որտեղ «քաղմատեսակ երաժշտական ստեղծագործությունների անընդգրկելի աշխարհում» նրա աշքերի առջև «ամեն ժամ, ամեն վայրկեան» հառնում էր «անսպառ գործունեութեան հեռանկարնե-

բով լեցուն ապագայի պատկերը» (Կոմիտասի՝ Կ.Կոստանյանին ուղղված նամակից):

Կարճ ժամկետում Կոմիտասն արմատականորեն փոխեց երաժշտության ուսուցման դրվագքը ճեմարանում: Հայկական նոտագրությանն առընթեր ներդրվեց և եվրոպականը, ձեռք բերվեցին եվրոպական երաժշտական գործիքներ, և ստեղծվեց ոչ մեծ նվազախոսմք: Բարձր վարպետության հասավ երգախմբի կատարողական մակարդակը: Կոմիտասի կողմից Էջմիածնում պարբերաբար կազմակերպվող համերգները մեծ հետաքրքրություն էին առաջացնում և լատ մի գրախոսի կարծիքի՝ «այլ եթէ մի կարևոր կենտրոնում իսկ տեղի ունենար ընտիր հասարակութեան առաջ, մեծ տպավորութիւն պետք է քողներ անշուշտ»:

Կոմիտասի ժամանումը նշանակալի աշխուժություն հաղորդեց Էջմիածնի կյանքի միապաղա ընթացքին: Եվ խնդիրը միայն այն չէր, որ մշակութային կենտրոններից հեռու Հայաստանի մի անկյունում սկսում է հորդել երաժշտական բարձր արվեստի աղբյուր: Բացառիկ առինքնող էր և Կոմիտասի անձը՝ անհանգիստ, եռանդուն, նա վարակում էր ամենին իր զվարքությամբ, դյուրահաղորդությամբ, վիրխարի ներքին հմայրով: Ահա Կոմիտասի դիմապատկերից մի քանի գծեր, քաղված նրա մտերիմ ընկերոջ հուշերից. «Սիօնահասակ, նիհար, ջղուտ եւ զգայուն, դեմքը դեղնավուն, աչքերն արտահայտիչ եւ վառվոուն, գլուխը ճաղատ, մորութը ոչ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն բռնած, այսպես կոչված «վազներեան», ինըն արագարայլ, միշտ շտապող, աշխատասեր, կյանքից գոհ, լավատես... Իր գիտական ուսումնասիրութիւնների, իր երաժշտական ստեղծագործութիւնների պահերուն խոհուն, ծանր եւ զուապ, ինչպես մի զերման զիտնական, իր դպրոցական-մանկավարժական պարապմունքների, իր համերգային փորձների ժամանակ լրից, խիստ եւ պահանջկոտ, որքան փոխվում էր այդ մարդը կյանքի մեջ, ազատ եւ հանգստի ժամերին, ընկերական ու ընտանի շրջաններում: Զվարճախոս, սրախոս, կատակարան, վառվոուն, նույնիսկ երբեմն թերեւ: «Սա ի՞նչ մասիսարա մարդ է, եղբայր, սա հոկատարեալ կոմիկ է, միքե սա՞ է Կոմիտասը», - կասեր, անկաս-

կած, այդ պահերին անձանոք հանդիպող» (Գ.Լևոնյանի հուշերից):

Անկաշկանդ ուրախության մթնոլորտում անցնող նման երեկոները յուրատեսակ լիցքաբափումներ էին լարված աշխատանքից հետո: Եվ ոչ միայն ապշեցուցիչ աշխատափրությամբ առանձնացող Կոմիտասի, այլև նրա բարեկամ-գործընկերների՝ ճեմարանի ուսուցիչների համար, որոնց մեջ կային ականավոր, պայծառ մտավորականներ: Ամենավաստակաշատների թվին էր պատկանում զրականության ուսուցիչ, հոչակավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Վաերի Բյոյոստվը նրա մասին գրում էր. «Փայլուն կրթություն ստացած անձ՝ համաշխարհային զրականության դասական նմուշներով իր ճաշակը դաստիարակած Հովհաննիսյանը շատ առումներով հայ նոր բանաստեղծության նորագույն փուլի ստեղծողն էր»: Իսկ, ընդհանուր առմանք, նրանք երիտասարդ, կրթությունը նոր ավարտած, տաղանդավոր մարդիկ էին, որոնք դասախոսական գործունեությունը համատեղում էին լուրջ գիտական հետազոտությունների հետ: Նրանք բոլորը՝ և Մանուկ Աբեղյանը, և Հրաչյա Աճառյանը, և Հակոբ Մանանդյանը, և Գարեգին Լևոնյանը, հետազում հոչակվեցին իրքև խոշորագույն գիտնական-հայագետներ: Առնչվելն այս երեւին մարդկանց հետ մեծապես զարդարում էր Կոմիտասի առօրյան Էջմիածնում:

Նրանցից մեկի՝ զրականության պատմաբան և ժողովրդական բանաստեղծության հիմնալի գիտակ Մ.Աբեղյանի հետ Կոմիտասը հաստատել էր ոչ միայն բարեկամական, այլև ստեղծագործական սերտ կապեր: Նրանք միասին մտահեցել էին «Հազար ու մի խաղ» վերնագրով ժողովրդական երգերի բնագրերի հրատարակությունը (ինչպես հիշում է Մ.Աբեղյանը, Կոմիտասը Էջմիածին վերադառնալու պահին արդեն հավաքել էր ժողովրդական երգերի՝ հազարից ավելի զրառումներ, ինչը և հիմք տվեց այդպես անվանելու նախատեսվող հրատարակությունը): Ժողովրդական երգերի բնագրերը պետք է հրապարակվեին առանձին պրակներով՝ յուրաքանչյուրի մեջ 50-ական երգ: Լույս տեսան այդպիսի երկու պրակներ: Նյութա-

կան դժվարությունները խոշընդուտեցին ինչպես այդ աշխատության, այնպես էլ Կոմիտասի հավաքած ժողովրդական երգերի մեջեղիների հրապարակմանը:

Այնինչ Կոմիտաս բանագետի գործունեությունն այդ շըրջանում բացառիկ արդյունավետ էր և արգասավոր: 1904թ. նրան այցելած երաժշտագետ Վ.Կորգանովը իր հաղորդումներում հիացմունքով էր արտահայտվում Կոմիտասի ազգագրական աշխատությունների մասին. «Ծուրջ 3000 (ընդամենը 3-4 տարում թիվն ինչպիսի՝ ցատկ է կատարել.-Գ.Գ.) հայկական, քրդական, պարսկական և թուրքական, եկեղեցական և աշխարհիկ եղանակներ են զրի առնվել Կոմիտասի կողմից, մի շարք տեսրեր ընդգրկում են աշխատություններ հայկական խազերի վերծանման, ձայնեղանակների տեսության, ժողովրդական երգերի ուսումնասիրության ուղղությամբ, երգերի մեղեղային ու կշռութային բանաձևեր և նույնիսկ բազմաթիվ պարերի մանրամասն նկարագրություն»:

Այս ամբողջ հարատությունից Կոմիտասին հաջողվեց հրատարակել միայն 13 քրդական մեղեղիներ (այդ ժողովրդի երաժշտական բանահյուսության աշխարհում առաջին հրապառակումը) իբրև նոտային հավելված՝ ազգագրագետ Ս.Հայկունու «Հայ-քրդական էպոս» աշխատության և քառասունից ավելի հայկական ժողովրդական մեղեղիներ՝ իբրև ցուցադրական նյութ հայկական ժողովրդական երաժշտության հարցեղի մասին նրա հոդվածների ու հետազոտությունների համար:

Հայ երաժշտական ազգագրության գիտական հիմքը դնող այդ աշխատություններից կարելի է հատուկ ընդգծել. ա) «Հայ գեղուկների պարը», առաջին անգամ հրապարակվել է գերմանական “Zeitschrift für armenische Philologie” ժողովածուի մեջ 1901թ., թ) «Հայ գեղուկ երաժշտություն», հրատարակվել է 1907թ. Փարիզում միաժամանակ հայերեն («Անահիտ» հանդես) և ֆրանսերեն (“Mercure Musical” հանդես) լեզուներով և զ) «Լոռվա գուրաներգը Վարդարլուր գյուղի ոճով» («Նաւասարդ», Պոլիս, 1914թ.):

Կոմիտասի աշխատությունները, գրված ամենայն գիտական

ջանադրությամբ և միաժամանակ պարզ և բանաստեղծական լեզվով, բացահայտում են ժողովրդական երաժշտական արվեստի անկրկնելի «կյանքը»՝ կենցաղավարումն ու տարածումը, ժանրերի բազմազանությունը, բանաստեղծական և երաժշտական լեզվի առանձնահատկությունները: Նրանց մեջ սփոված թանկարժեք շատ մանրաճանակ ապշեցնում են դիպուկ դիտարկումներով՝ այնքան կենդանի ու պատկերավոր, որ դրանց ետևում տեսնում ես միայն մեծ արվեստագետին հատուկ խորաքափանց հայցը ու հանճարեղ կանխազգացում:

1904թ. Կոմիտասը հիմնականում ավարտին է հասցնում գեղջկական երգարվեստի առավել հատկանիշական նմուշների յուրատեսակ համահավաք կազմելու աշխատանքը: Ժողովրդական երգերի ժողովածուն, որն այժմ հայտնի է «Ազգագրական ժողովածու» վերնագրով, դարձավ հայկական ժողովրդական (գեղջկական) երաժշտության խևական հանրագիտարան և մինչև այժմ մնում է զերազանցված՝ նրանում ամփոփված ժողովրդական արվեստի նմուշների հարստությամբ և գեղարվեստական արժեքով:

Հետաքրքրական եղավ այդ ժողովածուի ճակատագիրը: 1904թ. Կոմիտասի աշակերտ Սպիրիդոն Մելիքյանը երաժշտական կրթությունը շարունակելու նպատակով պետք է մեկներ Գերմանիա: «Կոմիտասը իբրև իմ ուսուցիչը և ուղեցույցը.- վերիիշում էր U.Մելիքյանը.- տրամադրեց ինձ իր հավաքած երգերի ամբողջ ժողովածուն արտագրելու եւ հետո վերցնելու՝ իբրեւ հայկական թեմաների անսպառ աղբյուր, որով հետև շատ էր մտահոգված իմ գերմանական ազդեցություններով տարվելու խնդրով»:

Այդ երջանիկ դիպվածի շնորհիվ ժողովածուն փրկվեց և արդեն խորհրդային տարիներին հրատարակվեց Երևանում (1931թ.): Այս հրատարակությունն անգնահատելի դեր խաղաց հայ երաժշտության զարգացման մեջ, ողեշնչման անսպառ աղբյուր դառնալով հայ կոմպոզիտորների մի բանի սերունդների համար: Կոմիտասի բուն ձեռագիրը հայտնաբերվեց շատ տարիներ անց միայն, 50-ական թվականների կեսին:

Բեռլինից Կոմիտասի վերադառնալու պահից փաստորեն սկսվում է նրա ստեղծագործական գործունեության ինքնուրույն և առավել արգասավոր ժամանակաշրջանը: Այն երկար չունեց՝ ընդամենը 15-16 տարի: Սակայն այդքան ժամանակն էլ բավական եղավ, որպեսզի հիմնիվեր ցնցեր հայ երաժշտության մասին կայունացած բոլոր պատկերացումները:

Կոմպոզիտոր-ստեղծագործող Կոմիտասին հատուկ է զարմանալի նպատակառուղղվածությունը: Պատաճեկան տարիներից նա ասես կանխազգաց իր առաքելությունը և այնուհետև անշեղորեն ու համառորեն ընթացավ դեպի ընտրված նպատակը: Նա չէր նեղվում մասնագիտական անհրաժեշտ հմտությունների բացակայությունից: Դրանք փորձում էր լրացնել ինքնակրքությամբ: Հետագայում, երբ նրա առջև բացվեց եվրոպական երաժշտական արվեստի անձայրածիր հորիզոնը, իրեն քոյլ շտվեց զերվել ինքնավատահ և փայլուն տեխնիկայի դյուրանքներով: Կոմիտասին չէր վախեցնում իր համար նախանշված առաքելության արտաստվորությունն ու ծանրությունը, և նա, ասես, չէր նկատում երեմն միայն ենթադրվող, երբեմն էլ բացահայտ արտահայտված անհասկացողությունը, որին հանդիպում էին նրա ստեղծագործական փորձերը նույնիսկ իրենց համոզմունքներով նրան մոտ եղած երաժիշտ հայերի միջավայրում: Կոմիտասը զիտեր՝ ինչի էր ձգտում, և նրա ճանապարհը՝ նետի պես ուղղընթաց, ավելի ու ավելի պարզուց էր մոտեցնում նրան իր բաղձայի նպատակին:

Կոմիտասը ձգտում էր երաժշտական պատկերների մեջ Վերարտադրել ժողովրդի բուն կյանքը: Ոչ թե այն ժողովրդի, որի վերացականորեն կատարյալ, ոռմանտիկ կերպարը դեռ շարունակում էր ապրել ազգային արվեստի գործերում՝ առաջցնելով խանդադատանքի, հիացմունքի ու դառն ափսոսանքի շափազանցված արցունքներ: Այլ իսկական, կենդանի: Այն ժողովրդի, որի հետ նա մշտապես շփվում էր, որին ամեն օր, ամեն ժամ տեսնում և լսում էր:

Խսնիքը, որ ճգնում էր լուծել Կոմիտասը, իր ժամանակի հայ ազգային արվեստի ամենասուր խնդիրներից մեկն էր: Այդ

մասին դարաշրջանի խոշորագույն բանաստեղծ Հովհ. Թումանյանը հուզմունքով գրել է. «Ժողովուրդներն ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ, սակայն կան խնդիրներ, ոյզնք համաժողովրդական են և որոնք հաստատուն կնիքը դնում են գրականության վրա:

Ի՞նչն է հայի համաժողովրդական ցավը, կամ ուրիշ խոսքով՝ ի՞նչ վիճակ է ունեցել հայությունը,- հալածանք, տանջանք-տարագիր վիճակ, պանդխտություն: Տանջանքն ու բռնությունը բուն երկրում այն աստիճանի է հասել, որ ժողովուրդը ստիպված քողել է բուն երկիրը, իր հողն ու ջուրը, իր վարանը և անցել է ուրիշ վայրեր հանգիստ շունչ առնելու նպատակով... Այդպիսի տարագիր, պանդուխտ ժողովրդի գրականությունն էլ անշուշտ պիտի լիներ պանդխտության և հալածանքի գրականություն: Պանդուխտ ժողովուրդ՝ պանդուխտ գրականություն... Պանդուխտ գրողները օտար հորիզոնի տակ սիրած երկրի նկարագրությունն անելիս չափազանցությունների և սխալանքների մեջ ընկան, և դա ունեցավ իր ծանր ազդեցությունը հայ գրականության վրա:

Օսար երկրում բուսած մի ծաղկի չի կարող երկրի շունչն ու փարթամությունն ունենալ. մի մարդ, որ իր երկիրը չի տեսել, նա չի կարող այդ երկրի իրական պատկերը տալ»:

Կոմիտաս երաժշտի համար ժողովրդի կերպարը, նրա ու գին մարմնավորում էին ժողովրդի երգերը: Ժողովրդական կյանքի պատկերների ճշմարտացի վերստեղծման ձգտումը նրա համար անանջատելի էր ժողովրդական արվեստի բուն նմուշների որոնումներից: Նա ճշտապես պայքարում էր այս մարդկանց դեմ, ովքեր փորձում էին ներկայացնել ժողովրդական երգը «իբրև մեղկ, տխուր, մելամադոտ երաժշտութիւնը»: Նրա խոր համոզմամբ «հայ երաժշտութիւնը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է եւ կենդանութիւն, ու իր մեջ կը սնուցանէ փիլխառփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որ բովիեսեւ երաժշտութիւնը ամենէն մարուր հայելին է ցեղին, ամենէն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտայայտութեանց մեջ - կենդանի,- որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ,- ոյր

Բան ուժեղ է իրեն ծնունդ տուտդ ժողովուրդը»:

Կենսականություն և ուժ՝ ահա, ըստ Կոմիտասի, ժողովրդական արվեստի ըմբռնման բանալիները:

Կոմիտասի գեղագիտական սկզբունքներն առանձնահատուկ ցայտունությամբ են ի հայտ գալիս նրա աշխատանքային երգերի շարերի մեջ, գրված երգչախմբի համար: Մինչ Կոմիտասը աշխատանքային թեման գրեթե չեր շոշափվում ոչ միայն ազգային, այլև համաշխարհային երաժշտական գրականության մեջ: Իրավամբ նրան է պատկանում թերևս առաջին երաժշտական գործերի ստեղծման արժանիքը, որոնցում աշխատանքի թեման լուծված է պատշաճ ընդգրկմամբ, գեղարվեստական ուժով և փայլով: Կոմիտասի կարծիքով աշխատանքը որոշակի կենսական հանգամանքներում դառնում է գեղջուկի համար հոգևոր և ստեղծագործական ուժերի առավել ամրողական և բարձրագույն արտահայտություն: Հենց աշխատանքի ընթացքում, բնության դեմ պայքարի և նրա հետ միաձուվելու մեջ է տեղի ունենում գեղջուկ-շինականի կախարդական վերափոխումը ոգեշունչ բանաստեղծի ու երաժշտի: Եվ այդ ժամանակ նա հանդես է գալիս իրքն «կախարդ վարպետ, որ կարդում է հարազատօրեն բնութիւնը, ստեղծում բազմաթեղուն մտքեր, նոցա միջում է իր հզօր ու պարզ շունչը, դրոշում է իր բնաւորութեան եականով՝ ներքին եւ արտաքին լիի կեանքով եւ կնքում է բառենով ու եղանակով իր հարազատ զավակը՝ գութաներգը»: (Կոմիտաս)

Կոմիտասի աշխատանքային երգերը տարբեր են իրենց բնույթով և բովանդակությամբ: Դրանցից առավել հայտնիները՝ «Գութաներգ», «Երկրագործի երգը», «Կալի երգը», գերում են բարձրակերտ կառուցվածքով, կերպարների վսեմ շնչով:

Ա. Շահվերդյանի դիպուկ արտահայտությամբ, դրանք իջնչում են իրքն «աշխատանքի ժողովրդական սիմֆոնիաներ»:

Կոմիտասի խմբերգերն ընդհանրապես քիչ են նման սովորական երգչախմբային ստեղծագործությունների: Ավելի շուտ դրանք գունեղ երաժշտական պատկերներ են: Հմտորեն օգտագործելով ժամանակակից երգչախմբի հնարավորությունը առաջանաւ է աշխատանքի մեջ և այս աշխատանքը առաջանաւ է աշխատանքի մեջ:

յունները՝ կրմպոզիտորը արտահայտում է ոչ միայն այս կամ այն զգացնունքը, տրամադրությունը, այլև աշխատանքային ընթացքի բուն բնույթը, շրջապատող բնության երանգները:

Խստաշունչ և վեհորեն է հնչում «Գութաներգը»՝ Կոմիտասի համեմատաբար վաղ գործերից մեկը: Երգը բովանդակում է, կարծես, ներգործության երկու շերտ: Առաջին հատվածում՝ խմբերգային հյուսվածքի տեսակետից խիտ ու միաձույլ, ընդգծված է հոգեկան վերելքի, մղումի արտահայտությունը: Տարբեր ձայնների մեջ առաջացող փոխկանչը, ասես, հեռու լեռներում մարող արձագանք է: Կանացի ձայնների բնարական հնչողությունը ներմուծում է այդ պատկերի մեջ նոր և անակնկալ երանգ: այստեղ և՛ լուսավոր հավատն է ապագայի հանդեպ, և՛ տագնապալի նախազգացումներ, անորոշ երկյուղ անհայտի առաջ:

Մեծածավալ «Երկրագործի երգի» բնույթը վեհաշունչ է, ուրախ, տոնական: Հերթով մուտք գործող ձայնները՝ մերք միմյանց հաջորդող, մերք միահյուսվող, երթեմն էլ բախվող, այդ ինքնահաճ սուրացող, փոթորկվող հնչյունների ողջ հորձանքը երևակայության մեջ ծնում է ձմեռվա ընդարմացածության կապանքները թոքափող բնության հզոր զարթոնքի պատկեր: Խմբերգի արտասովոր և հնչյունային կազմով զարմանալի ինքնատիպ երաժշտական հյուսվածքի մեջ լսվում են հնագույն հերանոսական ժամանակների արձագանքները՝ բեկված բացարձակապես նոր տեսանկյան տակ, որը կանխագուշակում է հետազա տարիների համաշխարհային երաժշտության որոշ հատկանշական երևույթներ (մասնավորապես կարելի է նշել Ստրավինսկու «Սըրբազն զարուն», Պրոկոֆևի «Սկյուրական սյուիտ», Բարտոլի «Allegro barbaro» ստեղծագործությունները):

Դա ժողովրդական արվեստի նախաստեղծ ուժով և հզորությամբ լեցուն կերպարների մարմնավորումն է:

Կոմիտասի աշխատանքային երգերից «Կալի երգը» Հայատանում վայելում է, թերևս, ամենամեծ ժողովրդականությունը: Կոմիտասի վոկալ արվեստի այս գլուխգործոցի ներգործության արտասովոր ուժի «զադանիքը» էպիկական վեհութ-

յան և սրտահույզ. խոր ու կրքոտ բնարականության միահյուսման մեջ է:

Ինքնատիպ է այդ խմբերգային պատկերի դրամատուրգիան: Երգչախմբային տարրեր ձայների միմյանց հաջորդող մուտքը, ասերգային դրվագների և երգային լայն «հործանքների» փոխհամադրումը ստեղծում են բնական, հանպատրաստից հորինվածքի, ընդհանուր աշխատանքային ընթացքի մեջ ներգրավված ժողովրդի զանգվածների անկաշկանդ երաժշտական հաղորդակցության տպավորություն: Բարձրակետային դրվագը («Հոլ արա, եզո») ազգային արվեստում հայ ժողովրդի հոգու մարմնավորման ամենավառ օրինակ կարող է ծառայել: Դժվար է նկարագրել երաժշտական այդ էջերի ոգեշնչունչ արտահայտչականությունը. իուզական անմիջական պոռքկումն այստեղ շափակորվում է արտահայտման իմաստուն ինքնակենտրոնացմամբ, իսկ զգացմունքի ազատ սլացքն, ասես, անտեսանելիորեն շղարշվում է քարուն, շարտահայտված ցավի ստվերով:

Կոմիտասի ստեղծագործության մեջ բնարերգությունը բոլորվին առանձնահատուկ աշխարհի է: Ժողովրդական բնարական սիրային երգերը կոմպոզիտորն ընկալում է իրք ժողովրդի հոգու մարդկային, մարդասիրական էության ամենանվիրական արտահայտություն: Դրանք հրապուրում են նրան իրենց բարոյական մաքրությամբ, հոգեկան զեղումների նրբությամբ ու հարատությամբ: Կոմիտասն ամենից առաջ ձգտում է դրոշմել բնարական զգացմունքի ամբողջականությունն ու անմիջականությունը: Այստեղ գրեթե չկան հոգեկան երկփեղկվածության, հակասական զգացմունքների դրամատիկական բախման դրսերումներ՝ տիպական 19-րդ դարի ոռմանտիկական երաժշտական արվեստի համար: Այստեղ միշտ իշխում է մեկ զգացմունք, մեկ տրամադրություն: Եվ երաժշտական կերպարի այդ առավելագույն խտացումը դառնում է զարմանալի զեղարվեստական տպավորությունների աղբյուր... Ներկապնակին հանձնված վճիռ, մաքրության ասես աստիճանաբար «քանձնանում է» և հազենում այնպիսի հզոր ուժով, որ անսպասելիորեն

ի հայտ է գալիս նրա ողջ անհատակ խորքը:

Սիրային քննարկերգության «հավերժական» մոտիվներից Կոմիտասի գործերում մյուսներից առավել հաճախ հանդիպում են երեքը. խնդագին երանգներով գումավորված երազանք սիրած էակի մասին, անպատասխան սիրո թախիծ և, իբրև դրանց միջինը՝ սիրո սպաման, սիրային տվայտանքի մոտիվը: Զնարական, ինչպես և աշխատանքային երգերում, գրեթե մշտական անփոփոխ ետևախորք է ծառայում քննության կերպարը՝ սիրահարների հավերժական ու անդավաճան ուղեկիցը: Այդ հազիվ նկատելի, բայց խմբերգային պարտիտուրի մեջ նրբորեն վերստեղծված ետևախորքը (լայն հնչյունային «հեռանկար», հնչյունապատհայտչական զանազան հնարներ և այլն) ոչ միայն ունկնդրին ներքաշում է երաժշտական պատումի կենդանի մրնողրտի մեջ, այլև հաղորդում է այդ պատումին բանաստեղծական ոգեշնչվածություն:

Ահա այդ շրջանի՝ Կոմիտասի քննարսական երգերից մի քանիսը: Պայծառ, կրակոտ «Իմ չինարի յարը» գերում է իր անպաճույժ մեղեղիով և չարաճճի քննույթով: Տրամադրությամբ նրան մոտ է «Շողեր ջան» երգը: Զնայած արտահայտման պարզությանը՝ այն Կոմիտասի խմբերգային արվեստի ամենակատարյալ նմուշներից մեկն է: Պարտիտուրը հնչում է այնպես թերև, բափանցիկ ու «սահուն», ասես հյուաված է երերից ու դաշտային ծաղիկների ամենանուրը բուրմունքից...

«Սարերի վրով գնաց»-ը երգ է բաժանման մասին: Սիրածին զինվոր են տարել, և աղջիկը սարերին է հաղորդում իր վիշտը: Խոր զգացմունքով լի բախծոտ մեղեղին առաջ են տանում կանացի բարձր ծայները: Սակայն դեռ չի հասցրել ավարտվել այդ մեղեղին, երբ ծնվում է կարեկցական անդրադարձը. նույն այդ մեղեղին ստանձնում են տեսորները, իսկ այնուհետև խոր արձագանքի նման այն հնչում է խոր բասերում: Եվ ահա ասես արդեն չկա իր անսփոփ վշտի հետ մենակ մնացած աղջիկը. նրա զգացմունքի ծանրությունը կիսում են հարազատ սարերը, և դա մեղմացնում է վշտի ծանրությունը՝ պարզեցնով հոգու բաղձակի անդորրը:

Զգալիորեն ավելի մութ երանգով է գունավորված վիշտը հանրահայտ «Գարուն ա» երգում: Աղջկան լրել է սիրածը: Շըրջապատող քնանկարը՝ միօրինակ ու զարհութելի,- ձյունով են պատվել զարնան կանաչած դաշտերը, - դառնում է նրա հոգեվիճակի յուրատեսակ խորհրդանշիցը: Ներքին ամայացման, հույսերի խորտակման պատկերը բացահայտվում է Կոմիտասին հատուկ ծայրահեղ հակիրճությամբ և հուզական զավվածությամբ: Սակայն դրանով այն առավել տպավորիչ է: Կոմպոզիտորն այստեղ հանճարեղորեն գտել է վաղեմի երջանկության թրթիռն ու ջերմությունն իր մեջ դեռ կրող զգացմունքի և դաժան, անխնա իրականության միջև եղած ողբերգական հակադրության արտահայտությունը:

«Լուսնակն անուշ» երգը ժողովրդական արվեստում մարդու քնանկարային քնարերգության կերպարներին դիմելու հազվադեպ նմուշներից է: Երգի ժողովրդական սկզբնադրյուրը աչքի է ընկնում բարձր գեղարվեստական արժանիքներով՝ ինչպես երաժշտական, այնպես էլ բանաստեղծական: Վ.Քյուսովը գրել է այդ երգի մասին: «Հարկ է իրավիրել ընթերցողների ուշադրությունը այնպիսի մի գործի վրա, ինչպիսին «Գիշերերգն» է (անվանումն, անշուշտ, արվել է շատ ավելի ուշ՝ բանահավաքների կողմից), որի հմայքն այն զավվածության մեջ է, որով ժողովրդական երգիչը պատկերում է հարավային զիշերվա վառ շքեղությունը».

*Լուսնակն անուշ, հովան անուշ  
Ծինականի քունն անուշ:  
Ծագեց լուսնակ երկընուց,  
Հովրվի փողն էր անուշ:  
Հոտաղ եզներ կարածա,  
Մաճկալ պառկեր՝ քունն անուշ:  
Ջրդղուն քամին կըփիշե,  
Ծովային հովան էր անուշ:  
Դաշտեր, ձորեր մնջեր են,  
Ջրեր գըլզլան՝ ձենն անուշ:  
Հավքեր բառան իրենց քուն,*

*Բըլբովի տաղմ էր անուշ:  
Ամմահական հոտ բուրեր,  
Քաֆուր վարդի հոտն անուշ:*

Կոմիտասի խմբերգային մշակման մեջ հարուստ, պոլիֆոնիկ զարգացած հյուսվածքը հստկանշվում է հագեցվածությամբ և միաժամանակ հնչողության բափանցիկությամբ: Երաժշտությունը պատկերավոր վերստեղծում է և՛ բնած բնության նիրիուն հմայքը, և՛ զիշերային բնանկարի գեղեցկությամբ արթնացած լուսավոր անուրջները:

Կոմիտասի ժառանգության կարեռը մասն են կազմում անտունի՝ պանդուխտի երգերը: Այդ երգերը հայ ժողովրդական արվեստի առանձնահատուկ տեսակն են՝ ծնված Հայաստանի պատմական անցյալի յուրահատկությունից, տեսակ, որ խորապես արտացոլում է հարկադրաբար հայրենի օջախը լրած և օտար երկնքի տակ օքեանի որոնումներով բափառող ժողովրդի ողբերգությունը: Այդ թեմայի անդրադարձը կարելի է զտնել Կոմիտասի դեռևս վաղ ստեղծագործություններում: Հայրենիքի կարուտի զգացումը հուզաքափանց հաղորդող «Ծիծեռնակ» երգը զրված է եղել, ինչպես կարծում են, Բեռլինում ուսանելու տարիներին: Ստեղծման առումով ամենավակնութ երգն այնուամենայնիվ մինչև այժմ Հայաստանում մնում է ամենասիրված երգերից մեկը՝ գերելով իր բախնծոռ-ռոմանտիկական հնչերանգով և արտահայտության նորբ թովչանքով:

Գրեթե նոյն տարիներին էլ երեան է զալիս «Կոռունկ» երգի մշակումը՝ նոյնքան լայնորեն տարածված և նոյնքան էլ սիրված.

*Կոռնմկ, ուստի կուզաս, ծառա եմ ճայնիդ,  
Կոռնմկ, մեր աշխարհեն խապրիկ մը չումի՞ս,  
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս,  
Կոռնմկ, մեր աշխարհեն խապրիկ մը՝ չումի՞ս:  
Աշուն է մոտեցել զնալու ես քեպտիր,  
Երամ ես ժողովել հազարներ ու բյուր,  
Ինձ պատասխան չըտվիր, ելար, զնացիր,  
Կոռնմկ, մեր աշխարհեն զնա՛, հեռացիր:*

Կոմպոզիտորի գեղարվեստական մտահղացումը հետաքրքրական է ու ինքնատիպ։ Իայրենի երկիր վերադարձող թռչունի ազատ, բերկրալի թոփշքը (հնչյունապատկերային տեխնիկայի օգնությամբ դա բավականաշափ պարզորդ է հաղորդվում դաշնամուրային նվազակցության մեջ) առավել ուժգնորեն է ընդգծում օտարության մեջ գտնվող պանդուխտի խորունկ ցավն ու բախիծը։ Սակայն այդ մտահղացումը այստեղ ուրվագծվում է միայն։ Իր ժողովրդայնության համար երգը գըլխավորապես պարտական է զարմանահրաշ գեղեցիկ մեղեդուն՝ հայ միջնադարյան երաժշտական քնարերգության ամենաոգեշունչ ստեղծագործությանը։

Կոմիտասի գլուխգործոց «Անտունին» առանձնահատուկ տեղ է զրավում ազգային արվեստում (ոչ միայն երաժշտական)՝ դառնալով հայ ժողովրդի պատմության մեջ ողբերգականի՝ թերևս ամենավառ գեղարվեստական ընդհանուրացումը։ Հենց այդ երգը նկատի ուներ Կյող Դերյուսին, երբ գրում էր. «Եթե Կոմիտասը ստեղծեր միայն «Անտունին», ապա դա էլ բավական կլիներ, որպեսզի նրան համարեին խոշոր արվեստագետ»։

*Սիրտը նման է են փղլած տղմեր,  
Կոտրեր գերաններ, խախտեր է սրճեր,  
Բուն պիտի դրմեն մեջ վայրի հավքեր.  
Երբամ՝ ծի քալեմ էն էլման գետեր.  
Ըլմիմ ծկներու ծագերացըն կեր:  
Այ, տո, լա՛ճ տղնավեր:*

Երգում իշխում է մթագնած, «զիշերային» երանգը։ Դաշնամուրային մուտքը, ընդգրկելով ծայրերի ուղիստրները, ստեղծում է հնչյունային անհուն հեռանկարի զգացողությունը՝ անձայրածիր սև երկինք ու հեռավոր աստղերի սառը փայլ։ Այդ մոայլ, անշարժացած ետնախորքի վրա ծավալվում է միայնակության և կյանքին իրաժեշտ տալու ողբերգությունը։ Մենախոսության սկիզբը հնչում է իբրև վշտալի, սևեռուն խոհ։ Դաշնամուրային նվազակցությամբ ուրվագծվող սկզբ երթի ոիրմն աստիճանաբար ձեռք է բերում ավելի ու ավելի հաստատուն ու

սպառնալի ընթացք: Եվ որքան անողոք է այդ շարժման ճնշումը, այնքան ավելի ուժգին է «անտունու» հոգում ներքին ընդվզման ու բողոքի զգացումը: Սակայն ուժերն անհավասար են... Ամենավերջում հուսահատության սարսափն է և անդունդի ամենակուլ խավարը:

«Անտունիում» ի հայտ են գալիս Կոմիտասի արվեստի նորարարական ձգտումները: Երաժշտական լեզվի, հնչերանգի և հարմոնիկ գույների ինքնատիպությունը, անմիջականորեն հայկական ժողովրդական երաժշտության ձայնեղանակային համակարգի առանձնահատկություններից բխող երաժշտական զարգացման տրամարանության արտասովորությունը,- այդ ամենը հեռու էր 19-րդ դարի եվրոպական դասական երաժշտության մեջ ձևավորված նորմերի սահմաններից:

Ստեղծագործությունների այդ խմբին բնույթով և տրամադրությամբ համահունչ է «Ծիրանի ծառ» երգը: Նրանում ժողովրդական վշտի թեման ստանում է նոր երանգ, միահյուսվելով անարդար, արատավոր, այդ «անօրեն, փուչ աշխարհի» մերկացման նշանակալի թեմային:

Ուշագրավ է «Ծիրանի ծառ» երգի դրամատուրգիան: Սովորաբար հոգեվիճակի արտահայտման դրամատիկական լարման ուժգնացումն ուղեկցվում է հնչողության դիմամիկայի ընդհանուր վերելքով, որը բնականորեն հանգեցնում է զագաթնակետին: «Ծիրանի ծառ» երգը համաշխարհային երաժշտական գրականության մեջ «մեղմ զագաթնակետի» արտահայտիչ օգտագործման հազվագյուտ օրինակներից է: Ակավելով ջերմ ու կրքոտ պոռքկման արտահայտությունից՝ երաժշտությունն աստիճանաբար հալվում է և ասես ընդարձանում: Դիմամիկայի այդ արտաքին մարմանը զուգահեռ յուրաքանչյուր ակնթարք աճում է ապրումի ներքին լարումը: Հետզիետե մոռայլող հնչերանգը և միևնույն հուզական վիճակի մեջ ընկղմվելու ժայրագույն աստիճանը ստեղծում են անշարժացած, «քարացած» վշտի ցնցող պատկեր:

Սակայն վշտի ու տրտմության ինչպիսի խորքերի էլ հըպ-  
վեր Կոմիտասի մուսան, նա երբեք չեր կորցնում առնական ուժն  
ու լոկ իրեն հատուկ՝ ոգու վեհությունն ու արժանապատվութ-  
յունը:

## 4

«... Մեր ապագան հարթելու համար պետք էր նախ մեզ օտարներին ծանոթացնել, ցոյց տալ, որ մնար կենսունակ ենք, լուսու որդեգիր ու կարապետ ենք խավար փայրերում, շիճարար ենք»:

(Կոմիտասի նամակից)

Կոմիտասի կյանքն էջմիածնում համաշափ ու հանդարտ էր: Սի քանի տարի շարունակ նա համարյա ոչ մի տեղ չէր մեկնել, եթե չհաշվենք կարճատև ուղևորությունը Բեռլին՝ Միջազգային երաժշտական ընկերության համաժողով, ուր նա հանդես եկավ զեկուցմամբ: Մեկուսացած իրավիճակը քարե նպաստ էր նրա գիտական ու ստեղծագործական պարապմունքների համար: Վաղուց հասունացած մտահղացումների իրականացումը հեշտ չէր տրվում: Կոմիտասի ձեռագրերը պահպանում են երկարատև ու լարված աշխատանքի հետքեր: Քանից նա անդրադարձել է միևնույն երգի մշակմանը, ստեղծելով բազմաթիվ տարբերակներ: Նա ձգտում էր ոչ միայն ճշշմարտացի ու արտահայտիչ վերարտադրել այս կամ այն ժողովրդական երգի կերպարը, այլև գտնել ժողովրդական սկզբնադրյուրին համապատասխան երաժշտական ոճ: Դրա համար հարկ էր լինում հրաժարվել ավանդական շատ պատկերացումներից, որոնել երաժշտական նյութի կազմակերպման նոր ուղիներ: Գնալով խս-

տորեն էր վերաբերվում և բուն ժողովրդական երգերի ընտրությանը: Կոմիտասը կանգ էր առնում այն երգերի վրա, որոնց բուն ազգային բնույթը ոչ մի տարակույս չէր առաջացնում:

Եվ երբ ինչ-որ չափով բուլացավ հսկայածավալ ստեղծագործական լարման թափը՝ մշտապես կապված արվեստում սեփական ուղու որոնումների անկրկնելի պահի հետ, Կոմիտասի մեջ, բնականաբար, ցանկություն առաջացավ ծանրության իր ստեղծագործական փորձերին հանրության ավելի լայն շրջանուների:

1905 թվականին Կոմիտասն իր երգչախմբի հետ մեկնեց Թիֆլիս՝ այն ժամանակ ողջ Կովկասի վարչական և մշակութային կենտրոնը: Առաջին համերգը կայացավ ապրիլի 1-ին՝ դառնալով հիշարժան տարեթիվ հայ երաժշտության պատմության մեջ: Թիֆլիսում Կոմիտասի ելույթները (դրանք երեքն էին) անցան շունդավեց հաջողությամբ: Դրանք հայ ունկնդիրների հոգում արքացրին լարեր, որոնց գոյության մասին շատերը նույնիսկ չէին ենթադրում: Կոմիտասի մշակմամբ հնչող գեղջկական երգը՝ մինչ այդ գրեթե անձանոթ կամ թե ուամկականությամբ խրտնեցնող, հանկարծ հառնեց իբրև ժողովրդական կյանքի ու մարդկային հոգու խորքերին հասնող արվեստ: Երգչախմբի կատարողական գերազանց մակարդակը և Կոմիտաս երգչի (ժողովրդական և հոգեւոր երգերի նրա կատարումը միշտ դառնում էր համերգների բարձրակետը) խորահույզ վարպետությունը լոկ ուժգնացնում էին ընդհանուր գեղարվեստական տպավորությունը:

Կոմիտասի ելույթները բարձր գնահատեցին հայ մտավորականության առաջադեմ շրջանները: Նրանց բվում էր և Հովհ. Թումանյանը, որի հետ շուտով Կոմիտասը կապվեց ամենազերմ և անկեղծ բարեկամությամբ: Ավելի զուսպ վերաբերվեցին Կոմիտասին մասնագետ երաժշտների միջավայրում: Եթե ազգագրագետ Կոմիտասի գործունեությունը նրանց մեջ առաջացնում էր ամենահամակրական արձագանք, ապա Կոմիտաս կոմպոզիտորի ստեղծագործական փորձերը դիմավորում էին տարակուանքով: Կոմիտասի գործերի՝ մեծ մասամբ անսովոր երաժշտական կերտվածքը բվում էր օրինագանց

մարտահրավեր՝ ուղղված «կրթյալ» երաժշտության ավանդույթ-ներին (որքա՞ն ծանոթ են այդ կշտամբանքները, և որքա՞ն հաճախ են նրանք դառնացրել արվեստում չտրորված ճամփաներով ընթացող մեծ արվեստագետների կյանքը): Ունկնդիրների զանգվածը, ինչպես հաճախ լինում է, շատ ավելի խորաքափանց գտնվեց. Կոմիտասին խանդավառությամբ ընդունելով՝ նրանք ընկալեցին նրա համերգները՝ իրեն բացառիկ իրադարձություն հայրենական արվեստի կյանքում:

Հաջողությունը թիֆլոսում ակնհայտորեն քաջալերեց Կոմիտասին: Ժողովրդական երաժշտության զանձերի տարածումը, ինչպես երբեք մինչ այդ, ներկայանում էր իրեն ժողովրդի հոգեւոր գարքոնքին նպաստող, հանուն ազատության և լավագույն ապագայի նրա կամքն ամրապնդող առաջնահերթ կարևորության խնդիր: Նա երազում էր նաև, որ աշխարհը ևս ավելին իմանար իր հարազատ ժողովրդի գեղարվեստական ստեղծագործության մասին:

Այս խոհերով Կոմիտասը վերադարձավ Էջմիածին և սկզբսեց եռանդուն պատրաստվել նոր համերգային ելույթների Անդրկովկասի մյուս քաղաքներում: Էջմիածնի հոգեւոր հայրերը վաղուց արդեն խեթ էին նայում ժողովրդական արվեստով Կոմիտասի հրապուրանքին: Հասկանալով, որ այդ «դատապարտելի» հրապուրանքը ձեռք էր բերում ավելի ու ավելի մեծ թափ, նրանք վճռեցին խոչընդոտել Կոմիտասի ծրագրերի իրականացմանը: Դա արվում էր ոչ այնքան բացահայտ, բայց հետևողականորեն ու անհողող: Նրան կտրականապես արգելեցին մեծացնել երգչախմբի կազմը՝ կանացի ծայների ներգրավման հաշվին, որն անհրաժեշտ էր հյուրախաղային ուղևորությունների համար: Կիսով չափ կրծատվեց առանց այդ էլ չնչին նրա աշխատավարձը (պատրվակ ծառայեց եկեղեցական միջոցների «տնտեսումը»), ինչպես նաև սահմանափակվեց ժողովրդական երգեր հավաքելու համար գյուղերում շըրջելու հնարավորությունը: Այս ամենը ծանր հարված էր Կոմիտասի համար, որը անկեղծորեն հավատում էր հայկական եկեղեցու՝ լուսավորչական առաքելությանը:



Ամբողջովին քաղված աշխատանքի մեջ, նա մինչ այդ ասես չէր նկատում իր գլխավերևում քանձրացող ամպերը: Հիմա զգալով, որ շոշափվում են իր կյանքի ամենաքանի գործի շահերը, նա վճռական դիրք գրավեց: Հրաժարվելով ծառայողական պարտականություններից, որոնք նաև կապում էին Էջմիածնին, նա 1906 թվականին մեկնեց արտասահման:

«Ինձ հրավիրել են նորից պաշտոնապես ուսուցչության Էջմիածնին, - գրել էր նա Բեռլինից Մ.Քաքայանին: - Մերժեցի, որովհետև վճռել եմ դպրոցական ասպարեզից բոլորովին քաշվել և իմ գլխի ճարն անել: Ոչ ոք գրեթե չի մտածում ինձ ձեռք մեկնել: Ուժերս սպառվում են, եռանդս հատնում, հասակս անցնում: Եթե են այստեղ (Բեռլինում), հավատացեք, միայն և միայն իմ մի քանի կոպեկ ոռնիկովս, որի վրա եթե հույս դնեմ, քաղցած կմեռնեմ... Այս յոթ տարի է ձրի ծառայելով, թորերս մաշելով, ամբողջությունս քայքայելով, համբերեցի, ոչ մի տըրտունջ չհանեցի, քայց փոխանակ խրախույսի ոչ թե նախատինք, երանի նախատինք լիներ, լոկ անտարբերությունով վարձատրեցին ինձ: Իհարկե, վերարկու ենք հագել, պարտական ենք իշու պես չարքաշ լինել, կարոտ կյանք վարել: Վայ թեզ, թե թերանդ քաց ես արել, ե՛լ «հաստափոր», ե՛լ «ձրիակեր», ե՛լ «ապրտարույժ» ե՛լ ինչ զգիտեմ անուններ ժառանգես... Ե՞հ, ել ինչու ձեր գլուխն եմ ցավացնում. սիրտս կտոր-կտոր է լինում, չեմ իմանում ինչպես հովանամ...» («Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 116-117):

Չուտով արտասահմանի հայերից Կոմիտասը հրավեր է ստանում համերգներով հանդես գալ Փարիզում: Նա ուրախությամբ արձագանքեց այդ հրավերին: Համերգները Փարիզում (առաջինը կայացավ 1906 թվականի դեկտեմբերի 1-ին) կենդանի հետաքրքրություն հարուցեցին ֆրանսիական հասարակայնության մեջ: Դրանց ներկա էին լինում տեղի երևելի երաժիշտներ Բուրգո-Դյուկուլուրեն, Լուի Լալուան, Ֆրեդերիկ Մակերը, Դյուվերնուան և ուրիշներ: Լայնորեն արձագանքեց նաև մամուլը: «Օրոր» թերթը գրեց. «Իր երկու համերգներով Կոմիտաս վարդապետը մեզ ներկայացրեց մեղեղիների մի շահեկան շարք, ուր ըմբռշխնե-

ցինք բնավայրի համը և զմայլվեցինք ներդաշնակության վրա, որ նոյն ինքն Կոմիտաս Վարդապետի բարձր հմտության ու հանճարի գործն է»: Իսկ «Le Mercure Musical» երկշաբաթաթերթը, հանգամանորեն անդրադառնալով համերգներին, պարզապես բացառիկ է համարում դրանք. «Այս մեղեղիները քընօրույշ ելեկց-ներով եւ ընտիր, ճկուն ու կենդանի ոիթմով՝ մի երաժշտութիւն են, որ բդիստ է ամբողջովին սրտից և հոսում ինչպես մի բարմ ջուր, վճիռ և լուսավոր: Այս երգերը արեգակ ունին. ոչ կիզիչ արեւը Արարիայի կամ Պարսկաստանի անապատների, այլ ոսկեզօծ պարզութեամբ, ամբողջովին երկնային, որի ջերմութիւնը մի զգուանք է ձիւնապատ լերանց գագաթների, սաղարթագեղ անտառի և խոխոչացող վտակաց փայլով: Թերեւս սխալ չիներ ոմանց կարծելը, թէ երկրաւոր դրախտը Հայաստանում՝ Արարատ լերան ստորոտին էր. որովհետեւ այն աշխարհը, որի պատմութիւնը այնքան չարաբաստիկ եղաւ, իրօք ընտրեալ երկիր է, ուր արգաւան եւ բարեքեր բնութիւնը բաշխում է մարդուն ամէն տեսակ բարիք:

Մարդկանց հոգին էլ արժանի մնաց այդ բախտաւոր երկրին: Նա պահել է իր խորքում բնական պարզութիւնը, բարութիւնը, վստահութիւնը եւ կեանքի ու լուսոյ սերը: Եւ այս առաջնութեանց թանկագին գանձը, որ ոչ թիւրը, ոչ բուրդը եւ ոչ ոռւսը չկարողացան ո՛չ բաղել ոչ էլ խլել, այսօր մեզ հաղորդուեցաւ սիրոյ երգերի մի չքնաղ շարքով»:

Փարիզին հետևեցին համերգներն ու դասախոսությունները հայ երաժշտության մասին Ըվեյցարիայում (Յուրիխ, Ժնև, Լոգան, Բեռն) և Խտալիայում (Վենետիկ):

Կոմիտասի ուղևորությունն արտասահմանում երկարեց:

Նա կրկին Փարիզում է, այսուհետև մեկնում է Բեռլին: Այդ ընթացքում նա հասցնում է տպագրության նախապատրաստել իր մշակումների առաջին տետրը՝ հրապարակված 1907 թվականին Փարիզում՝ «Հայ քնար» վերնագրով: Այսեղ էլ՝ Փարիզում, նրա ղեկավարությամբ կազմակերպվում է ուշագրավ համերգ՝ նվիրված ոռւսական, հայկական և վրացական ժողովրդական երաժշտությանը:

Աներկրայելի հետաքրքրությունը, որ առաջացրել էին Կոմիտասի ելույթները, անշուշտ, պայմանավորված էր Եվրոպայում առաջին անգամ լայնորեն ներկայացվող բուն իսկ ժողովրդական եղանակների նորությամբ ու հարստությամբ։ Հայ ժողովրդական արվեստի խորքերից Կոմիտասի պեղած մեղենիների բանկարժեր ոսկեսփյուռը աշխարհի առջև շողաց իր ողջ նախաստեղծ զեղեցկությամբ ու բարմությամբ։ Սակայն Կոմիտասի ստեղծագործությունները բարձր զնահատած՝ Արևմուտքի առավել զգայուն երաժշտները, հավանաբար, ուշադրություն էին դարձրել նաև կոմպոզիտորի կողմից ժողովրդական մեղենիների «մատուցման» բուն եղանակին, որը տարբերվում էր ավանդական սկզբունքներից և համարունչ էր ժամանակակից երաժշտական արվեստի նորարարական ձևատումներին։

Մյուս կողմից, ինքը՝ Կոմիտասը ևս, հնարավորություն ստանալով ավելի մոտիկից ծանոթանալու առաջադեմ երաժշտական ուղղություններին, պետք է համոզվեր իր ընտրած ուղու ճշտության մեջ։ Հուզիչ էին նրա հանդիպումները ոռու կոմպոզիտորների գործերի հետ, որոնք այն ժամանակ գրավում էին փարիզյան երաժշտական շրջանների մեջ ուշադրությունը, և ֆրանսիական նոր երաժշտության հետ։ Չորեղ տպավորություն թողեց նրա վրա Դերյուսի «Պելեաս և Սելիզանդա» օպերան։

Համառ խնդրանքներն ու պահանջները ստիպեցին Կոմիտասին վերջապես մեկնել Եջմիածին։ Ծանր սրտով էր նա վերադառնում այնտեղ։

Վատ կանխազգացումներն իզուր չէին։ Փարիզի բազմերնց ու հարուստ երաժշտական կյանքից և, մանավանդ, ազատ ու անկախ բերկրանքի զգացողությունն ունենալուց հետո երաժշտական լուրջ գործունեության համար Եջմիածնի տրամադրած հնարավորությունները թվում էին առանձնապես խոճովկ, իսկ յուրաքանչյուր սահմանափակում՝ առանձնապես ճնշող։ Այնուամենայնիվ նա չէր էլ մտածում զենքը վայր դնել։ Իրեն հատուկ համառությամբ նա շարունակում էր ժողովրդա-

կան արվեստի տարածման գործը: Յուրաքանչյուր հարմար առիթ օգտագործելով՝ Կոմիտասը համերգներով ու դասախոսություններով ուղևորվում էր Բաքու, Թիֆլիս, Երևան: Հանդես էր գալիս մամուլում: Շատ էր աշխատում, նպատակ դնելով նոր գործերում հասնել երաժշտական ոճի հետագա խորացման և կատարելագործման:

Նա խորհում էր նաև խոշոր երաժշտական կտավների ստեղծման մասին: Համառորեն վիճորում էր հարմար սյուժեներ օպերայի համար: Նամակագրությունը Հովհ. Թումանյանի հետ և Կոմիտասի արխիվում պահպանված երաժշտական հատվածները որոշակի պատկերացում են տալիս «Անուշ» օպերայի մասին, որի իրականացման ուղղությամբ աշխատանքը առաջ բերեց ստեղծագործական ավլունի նոր հորդում: Սակայն նրա մտահղացումներին վիճակված չէր իրականանալ ...

Էջմիածնում իրադրությունն ավելի ու ավելի էր շիկանում: 1907 թվականին վախճանվեց Կոմիտասին համակրող կաքողիկոս Սկրտիչ Խրիմյանը: Եկեղեցու նոր ղեկավարները քարանտարքներությամբ էին վերաբերվում նրա բոլոր ձեռնարկումներին: Վանական միարանության հետադեմ խավը, խսկոյն որսալով Կոմիտասի հանդեա վերաբերմունքի փոփոխությունը, ազատություն տվեց իր զգացմունքներին: Մանր բանարկությունները, բանքասանքները, քսությունն ու գրպարտանքը հաճախ էին բունավորում Կոմիտասի կյանքը Էջմիածնում:

Իրեն համար խորը աշխարհում արվեստագետի ողբերգական մենության մասին պերճախոս պատմում են նրա նամակները:

«Որքան ուրախացա նամակիդ,- դիմում է նա իր մտերիմ քարեկամ Մ.Քաքայանին: - Հիրավի վաղուց չեմ գրել քեզ և ոչ քարեկամներիս, որոնք քեն հեռու, քայլե շատ մոտ են ինձ: Ո՛չ խելք են քողել, ո՛չ միտք, անհանգիստ քան եմ եղել հոգիս քերանս է հասել. երևակայիր, որ շրջապատված եմ քանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ լույս տեսնել, հեռանալ վեր, շատ վեր, այրող արևի հետ ապրել, քայլ ճանապարհ չեմ գտնում, անիրավ օդի մեջ խեղդամահ եմ լինում: Մարդ չկա,

որին բանաս սիրտդ, մարդ չկա, որից մի բան լսես: Նստում եմ առավոտից մինչև իրիկուն բուրուին պես իմ սեղանի առաջ, զրում ու գրում ... Գալիս է հանգստի բոպե, մարդ ես որոնում, որ գրածդ երգես, նվազես, ու կարծիք լսես,- չես գտնում: Դուրս եմ զալիս ու վազրի պես այս ու այն կողմ եմ շուտ զալիս մենամենակ, իմ պարտեզում ու տանիքի վրա: Ես զարմանում եմ, թե ինչու մինչև այժմ չեմ խելազարվել այս մքնողրոտի խարդախս վայրերում: Մեկ ուզում եմ թռչեմ հեռու, միայնակ, մեկ ուզում եմ փակվեմ մենակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ անում, որ չեմ ճգնում ... այդ, բայց ո՞չ այսպիսի, այլ մուզայիս հետն եմ ուզում միայնակ ապրել որ սիրտս չպղտորվի, միտքս չխարդախսվի, հոգիս չխոռվի և խիղճս չմեռնի ... Բայց և այնպես չեմ հուսահատվել, աշխատում եմ, շատ բան եմ զրել շատ բան եմ արել ...»:

Կոմիտասը հասկանում էր, որ ինքը երկար չի դիմանա: Ըկար ո՞չ մի նշույլ լույսի, ո՞չ մի հույս: Եվ երբ սպառվեցին ուժգնացող հալածանքից պաշտպանվելու բոլոր միջոցները, նա ուղղակի դիմեց կարողիկոսին:

Ահա այդ ցնցող մարդկային փաստաքութք՝ օգնության, կարելցանքի, սատարման հուսահատ կոչը.

### Ամենայն հայոց կարողիկոս Մատքեռս Բ կարողիկոսին

#### Վեհափառ տեր.

Քսան տարի է Մայր Արոռ Ս. Էջմիածնի միարան եմ: Մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով: Քսան տարուան ընթացքում շրջապատն ինձ թոյլ չի տվել այն անելու, ինչ կարող էի, որովհետեւ տեսայ միշտ որոզայք եւ ոչ արդարութիւն: Նեարդերս թուլացել են, այլեւս տոկալու ճար ու հնար չունիմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում: Ծարափ եմ ազնիվ աշխատանքի, խանգարում եմ, փափազում եմ հեռու մնալ. խցել ականջներս՝ չլսելու համար, զոցել աշքերս՝ չտեսնելու համար, կապել ոտքերս՝ չզայթակդելու համար, սանձել զգացումներս՝ չվրդովելու համար, բայց զի մարդ եմ, չեմ կարողա-

նում: Խիդաս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշվում է և միայն վարանմունքն է բուն դնում հոգու ու սրտիս խորքում:

Եթե հաճոյ է Վեհիդ ինձ չկորցնել, այլ գտնել, արտասվելով աղերսում եմ՝ արձակեցեք ինձ Ս. Էջմիածնայ Սիարանութեան Ուխտից եւ նշանակեցեք Սեւանայ Սենաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, զոնէ մնացած տարիներս շահեցնեմ եւ անդրբութեամբ զրի առնեմ ուսումնափրութիւններիս պտուղները՝ իբր առաւել կարեւոր ծառայութիւն հայ տառապեալ Սուրբ Եկեղեցւոյ և Գիտութեան:

*Վեհափառութեամդ ծառայ եւ որդի  
Կոմիտաս Վարդապետ  
Սիարան Ս. Էջմիածնի  
5 սեպտեմբերի 1909թ.  
Ս. Էջմիածնի*

Չսպասելով պատասխանի, որն այդպես էլ չհետեւեց, Կոմիտասը քողեց Էջմիածինը: Մեկնումի հապճեպությունը ավելի շատ փախուստ էր հիշեցնում:

5

Եվ արդեն խուլ դարձած հող  
Սրտիդ մեջ ծովս ու փոշի  
Քշված ծեռոքվ անողորմ  
Զարհուրելի մի ուժի -  
Հո հայրենի եզերքից  
Դուրս շարտված, որպես փուշ  
Թափառեցիր տարագիր,  
Իբրև մնուած երկրի հուշ ...

L. Quinlani

### *Requiem aeternam*

### Կոմիտասի հիշատակին

1910 թվականը Կոմիտասին գտավ Կոստանդնուպոլսում: Ինչու՞ հենց Պոլիսը գրավեց նրան: Այդ հարցը գրադեցրել է մեծ կոճակիտորի կենսագիրներից շատերին: Գիտակցության այն դառնությունը, որ Կոմիտասն ասես ինքն էր զնում զոհվելուն ընդառաջ, հարկադրում էր որևէ տրամաբանական հիմնավորում փնտրել ճակատագրական քայլի համար և, իբրև թույլ մխիթարանը, առաջ քաշել ընդունելի այլ վճիռների հնարավորության ենթադրություններ: Իսկ ինչու՞ Պոլիս և ոչ Թիֆլիս կամ Բաքու:

Կոմիտասը, վճռելով հաստատվել Պոլսում, հավանական է՝ հասկանում էր իր դրության վտանգավորությունը: Նա լավ էր ըմբռնում քաղաքական իրավիճակը և այդ առումով առանձ-

նապես չեր միսիթարվում պատրանքներով: Նա խորքից գիտեր ժողովրդի կյանքը, հայուրավոր մղոններ էր անցել հայրենի երկրում և ուներ սեփական հաստատուն համոզմունքներ: Որքան էլ ծանր էր հասարակ ժողովրդի կյանքը ցարական Ռուսաստանի պայմաններում, նա քաջ գիտակցում էր ռուսահայերի և մշտական ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող նրանց արևմտահայ եղբայրակիցների դրույթյան արմատական տարրերությունը: Նա լսում էր նաև Ռուսաստանում հասունացող հեղափոխության հարվածների բախումները և մեծ հույսեր էր կապում դրա հետ:

Կոմիտասի կրքոտ երազանքն էր Հայաստանի ազատագրումը, և նա անում էր ամեն ինչ, որպեսզի մոտեցնի այդ քաղաքացի օրը: Նրա դատողությունները հայրենի ժողովրդի ազատագրության ուղիների մասին ապշեցնում են խորաթափանցուրյամբ և պատիվ են բերում նրա սուր բննական մտրին. «Պետք է նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերութեան, մեկ օրենքի տակ,- գրում է Կոմիտասը Ա.Չոպանյանին,- աճեն ու զարգանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերե մեզ ազատությունը. շտապելով, առաջինը չառած երկրորդ քայլին դիմելով բոլորովին պիտի կորչենք. տաճիկն ոչ մի հույս մի ունենաք, մի սպասեք. նորա ուղեղը քարե ժայռից է, զարգացման անընդունակ, լոկ փշրելու համար պիտանի և ուրի տակը սալահատակելու հարմար ...»

... Զպետք է բաժանվենք, չպետք է խարվենք Եվրոպայի զանազան խոստումնալից խարկանքներին, միանալու ենք և գործնական ճամքան բոնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությանն ամփոփել ոռափի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարենի ու մեզ անմարս զաղափարներով առաջնորդվելու զարգանալ, երրորդ քայլն արդեն ինքը ոռա հեղափոխությունն է, որ պիտի անն, ոչ թե մենք»:

Եվ այնուամենայնիվ, նա ընտրեց Պոլիսը: Հավանաբար, այլ կերպ նա չեր կարող վարվել: Նա պետք է լիներ այնտեղ, ուր նրա կարիքը ավելի մեծ էր:

Կոմիտասը գտնում էր նաև, որ Թուրքիայում, այդ պահին առավել քան երբեք, բարենպաստ պայմաններ էին ստեղծվել ժողովրդի հոգևոր ուժերի զարդոնքի համար: 1908 թվականի թուրքական հեղափոխությունը տապալել էր Արդուլ Համիդի վարչակարգը և հանդիսավոր հոչակել ազգային փոքրամասնությունների սահմանադրական իրավունքները: Ինչպես երևում է Ա. Չոպանյանին ուղղված Կոմիտասի նամակից, նա առանձնապես չէր գայթակղվում այդ փաստով (որքան մարդարեարար իրավացի էր նա), սակայն, այնուամենայնիվ, չօգտագործել ստեղծված հնարավորությունները նրան թվում էր ոչ խելամիտ: Նա Պոլսի Էր Եկել գործողությունների մեծ ծրագրով և անմիջապես ընկղմվեց երաժշտա-հասարակական բուռն գործունեության մեջ:

Ծիշտ է, նրա շատ երազանքներ այդպես էլ մնացին չիրագործված: Վաղուց արդեն նա մտահղացել էր ազգային երաժշտանոց ստեղծելու գաղափարը: Եվրոպայի շեմին գտնվող վիրխարի քաղաքի՝ Պոլսի հնարավորությունները նրան առանձնապես գայթակղիչ էին ներկայանում: Սակայն, չնայած իր գործադրած հիրավի հերոսական ջանքերին՝ նվիրական մտահղացումից ստիպված էր հրաժարվել: Որոշ մխիթարություն կարող էր տալ իր դեկավարությամբ բավական հաջող կարգավորված երաժշտության ուսուցիչների պատրաստումը ընդհանուր դպրոցների համար, որին նա կարևոր նշանակություն էր տալիս: Նրան հաջողվեց նաև միավորել տաղանդավոր երիտասարդների մի խմբի, որոնց նա ծրագրում էր նախապատրաստել առավել լուրջ երաժշտական գործունեության համար: Գրեք բոլորն այդ խմբից (Բ. Կանաչյան, Վ. Սարգսյան, Վ. Սրբանձտյան, Մ. Թումանյան, Գ. Սեմերջյան, Ա. Արազյան) հետագայում նշանակալի տեղ գրադեցրին սփյուռքահայ երաժշտության մեջ:

Զգալիորեն լայնացան Կոմիտասին մշտապես գրավող արտիստական գործունեության շրջանակները: Նա կազմակերպեց վիրխարի երգչախումբ, որին տվեց «Գուսան» անվանումը: Փառքի արժանացած «Գուսանը» դարձավ Պոլսի տեսար-

ժամ երևույթներից մեկը: Նրա համերգները հավաքում էին բազմաթիվ ունկնդիրներ: Դրանցից մի քանիսի ժամանակ լրիվ կազմով ներկա էր դիվանագիտական կորպուսը: Երգչախմբի մասին հիացմունքով էին արտահայտվում հայկական և բուր-բական թերթերը:

«Գուսանի» հետ աշխատանքի ընթացքում ամբողջ ուժով բացահայտվեց Կոմիտաս խմբավարի բացառիկ վարպետությունը: Հնչողության ներդաշնակությունը, արտասովոր մեղմ, «երգեհոնային» ձայներանգը, նրբերանգների հարտությունը՝ հզոր, ուժգին պոռքումներից մինչև զեփյուղի նման ամենաբռույշ պիանոն, անմոռանալի տպավորություն էին գործում ունկնդիրների վրա:

Կոմիտասը հաճախ համերգներով ու դասախոսություններով ուղևորվում էր Պոլսից դուրս: Սեծ անդրադարձ ունեցան նրա ելույթները Իզմիրում, Ալեքսանդրիայում և Կահիրենում: Եզիպտական «Էլ-Մորքատամ» և «Էլ-Վարան» թերթերն անկեղծ հիացմունքով էին գնահատում Կոմիտասի արվեստը: Նրանք արժեկորում էին նրա զործունեությունն իրքի Արևելքի հարատագույն երաժշտական մշակույթի հզոր վերածննդի սկիզբ: Արար ունկնդիրներին վերջնականապես գերեց Կոմիտաս երգիչը: Նոյն «Էլ-Վարան» թերթը համեմատում էր նրան Արևելքի առասպելական երգիչ Իրրահիմ իրմ-էլ-Մահտիի հետ, որն, ըստ ավանդության, երգելու իր արվեստով հնագանդեցնում էր վայրի գազաններին: «Գալով մեզ,- գրում էր թերթը, պետք է խոստովաննենք, թե այս գիշեր իրագործվեց ինչ որ անկարելի էր մեզ թվում և հաստատեցինք, որ խալիֆաներու երգիչ Իրրահիմ-իրմ-էլ-Մահտիի մասին պատմվածքը ճշմարտություն էր: Այս առթիվ շնորհավորում ենք ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ողջ Արևելքը, որի համար մենք մեզ հպարտ ենք զգում - մեր մեջ ունենալու համար գերապատիվ հայր Կոմիտասի պես անհատներ»:

1912 թվականին Կոմիտասին հաջողվեց Լայպցիգում հրատարակել երկու ոչ մեծ ժողովածուներ: Դրանց մեջ տեղ էին գտել ժողովրդական երգերի՝ հիմնականում 1907 թվականից

հետո կատարված մշակումները: Ինչպես ժողովածուներում ընդգրկվածները, այնպես էլ այդ ժամանակ նոր ստեղծված, բայց Կոմիտասի կենդանության ժամանակ չիրապարակված երգերը նրա արվեստի գագաքնակետն են, նրա նորարարական ձգտումների առավել լիարժեք մարմնավորումը:

Վեհ բանաստեղծականության և բուն ժողովրդական արվեստի զույների հյութեղության համադրության մեջ բացահայտվում է Կոմիտասի՝ այդ տարիների ոճի բնութագրական գիծը: Խմբերգային մշակումներում ապշեցնում է աճած վարպետությունը: Առ սովորել էր երգչախմբից իրապես կախարդական հնչողություն կորպել: Յուրաքանչյուր ձայն այստեղ ունի ինքնուրույն նշանակություն, և բոլորը համատեղ, ծովագելով հրաշագեղ ներդաշնակության մեջ, կազմում են նրբերանգների անսահման բազմազանությամբ փողփողացող, կյանքով լեցուն երաժշտական հյուսվածքը:

«Առավոտուն բարի լուս» խմբերգում կոմպոզիտորն ասես հպվում է կուսական հոգու ամենամաքուր ու խորիրդավոր լարերին: Նուրբ արծաթափայլ, «Չողշողուն» երանգն ավելի ուժգնորեն է ընդգծում Հարսի մասին այդ ոչ մեծ երաժշտական պոեմի հուզիչ հմայքը: Կենցաղային «Խումարում» լսվում են անբռնազբոս ուրախությունը, պարողների դոփյունը, ծափերի համաշափ զարկերը: «Ինչո՞ւ Քինզյոլը մտար» հովվերգությունը շնչում է կանաչ ցողաշաղ մարզագետնի թարմությամբ: Շողշողուն, տոնական «Սոնա յարը» իրապուրուն է ժողովրդական ուժի և հզորության արտահայտությամբ:

Մրանք բոլորը լոկ առանձին օրինակներ են Կոմիտասի խմբերգային ժառանգությունից, որը մինչ այժմ մնում է անհասանելի կատարելատիպ Հայաստանի երաժշտական արվեստում: Կոմիտասի խմբերգային գործերն իրավամբ կարող են դասվել համաշխարհային դասական երգչախմբային գրականության ամենաբարձր նվաճումների թվին:

Նոր գծեր են նկատվում նաև այդ շրջանի՝ ձայնի և դաշնամուրի համար գրված երգերում: Քնարականությունն առավել նրբագեղ ու ոգեշունչ է դարձել: Դաշնամուրային նվագակ-

ցուրյան մեջ աճել է հնչյունային «գեղանկարչության» նշանակությունը՝ նրագույն հնչերանգի զգացողության իմաստով գրեթե իմպրեսիոնիստական: Այստեղ յուրաքանչյուր երանգ իմաստալի է, և հնչյունային հյուսվածքի նույնիսկ նվազագույն փոփոխությունն, ասես, ակնքարբորեն լուսավորում է պատկերը նոր կողմից: «Քեկեր ցոլեր», «Քեկե-քելե», «Կուժն առա», «Ալագյազ», «Կանչե, կոռոնկ», «Ես սարեն կուգայի» երգերը Կոմիտասի այդ շրջանի վոկալ քնարերգության փառահեղ նմուշներ են:

Բոլոր այս երգերում, անկախ նրանից՝ սիրո թեման է իր ամենաբազմազան դրսերումներով հնչում դրանցում, թե հայրենիքի կարոտից բախծող պանդստի թեման,- ուշագրավ է մի առանձնահատկություն՝ Հայաստանի կերպարի տեսանելի կամ աներեւոյթ ներկայությունը: Այդ կերպարի զգացողությունն առաջանում է երեմն հազիվ ուրվագծվող, բայց պատկերային իմաստի առումով միանգամայն որոշակի նշանակներից, որոնք կարող եք «սրատես հայացքով» նկատել և վերարտադրել միայն մեծ վարպետի հոգին: Լեռնագագարների բահանցիկ, զբնօպուն օղը, կանաչներում մոլորված առվակի՝ արևի տակ շողացող ցոլքը, հեռուն գնացող լեռների ուրվանկարների հալզող մշուշը, վեհության ու լայնարձակության, որոշակի խառության զգացումը, բայց ոչ վայրի ու մոայլ, այլ ասես մեղմացված գույների հակադիր բազմազանությամբ՝ ահա Կոմիտասի երաժշտության այն անկրկնելի մքնոլորտը, որում ուրվագծվում է Հայաստանի դեմքը: Ահա թե ինչու անպանույց ժողովրդական եղանակները նրա մոգական ձեռքի հպումով նոր կյանք էին ստանում, մտնելով ժամանակակից բարձր արվեստի ոլորտ:

Հայաստանը Կոմիտասի վերջին երգերում ասես զուգված է զարդոնքի խորհրդանիշ լուսեղ գարնանային զգեստով: Այդպիսին էր նա ցանկանում տեսնել իր երկիրը և արդեն տեսնում էր անուրջների մեջ՝ դառն ու ուրախ, ինչպես իր «Գարուն» երգի երաժշտությունը.

Արորն ասաց տատրակ հավքուն,  
 «Ինչո՞ւ կուզա կուց-կուց արյուն,  
 Երբա լցովի բարակ առուն»:  
 Տատրակն ասաց արոր հավքուն.  
 «Գնաց զարուն, եկավ աշուն,  
 Կըտրավ ձենիկ կարավներուն:  
 Էնքան պիտի լամ էրերուն,  
 Արյուն կարե իմ աշքերուն,-  
 Ես ինչ անեմ իմ ծագերուն»:  
 Ասաց. «Դու մի լա էս աշուն,  
 Զէ, վաղ կուզա բարի զարուն,  
 Լոյս կըրացվի խեղճիկներուն»:  
 Գնաց աշուն, եկավ զարուն,  
 Կարեր ջրիկ աղբյուրներուն,  
 Երբար լցովեր բարակ առուն:  
 Կամաշ-կարմիր զոյս-զոյս ծաղկունք,  
 Դաշտերն ամեն էրունք, բըռչունք.  
 Ձենիկ կուզա զառնիկ մարուն,  
 Մեր ապրելիք վեր երկընքուն:

Այդ ժամանակաշրջանում Կոմիտասն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հոգենոր զործերի ստեղծման վրա: Անհրաժեշտ է նշել, որ հոգենոր ստեղծագործությունները միշտ էլ զգալի տեղ են զրավել նրա համերգային ծրագրերում: Սովորաբար նրա համերգների առաջին բաժինը տրամադրվում էր հոգենոր երաժշտությանը, իսկ երկրորդը՝ ժողովրդական երգերի սեփական մշակումներին: Կոմպոզիտորի հոգենոր ստեղծագործությունները, ճիշտ է, պարբերաբար, կատարվում էին նաև եկեղեցական արարողությունների ժամանակ, ինչպես Էջմիածնում, այնպես էլ Կոստանդնուպոլիսում: Կոմպոզիտորը նամակներից մեկում գրում է. «Հայկական պատարագ ունիմ եռ տեսակ բազմաձայն դաշնակած, բայց չէ տպագրուած»:

Այդ թեագավառում Կոմիտասի առավել խոշոր և նշանակալի ստեղծագործությունն, անկասկած, Պատարագն է, գր-

ված արական երգչախմբի համար և հրատարակված 1933 թվականին Փարիզում Վ. Սարգսյանի ջանքերով (նոր, ճշտված ձևով այն հրատարակված է Կոմիտասի «Երկերի ժողովածովի» 7-րդ հատորում Ռ. Արայանի խմբագրությամբ, 1997 թվին): Նոր երևան եկած տպագրությունների հիման վրա («Երկերի ժողովածովի» 8-րդ հատոր) կարելի է դատել թե որքան երկար և երբեմն դժվար է եղել կոմպոզիտորի ուղին դեպի այդ բարձունքը: Առաջինը, որ աչքի է ընկնում, Պատարագի առանձին երգասացությունների տարբերակների առատությունն է, որոնց թիվը հասնում է 7-8-ի: Ակներև է, որ ամեն մի տարբերակում (իսկ դրանք, որպես կանոն, կապված են կոմպոզիտորի կյանքի տարբեր փուլերի հետ) նա առաջադրում և լուծում է նորանոր ստեղծագործական խնդիրներ, ջանալով բազմաձայնության միջոցներով որքան կարելի է ճշմարտացի և արտահայտիչ ներկայացնել հոգենոր մոնողիայի ոգին և բնույթը: Ընդորում, նա օգտագործում է ոչ միայն եկեղեցական առօրյայում ամբակայված մեղեղիական նմուշները, որոնք Ն. Թաշճյանի գրառմամբ հրատարակվել են 1874 և 1878 թթ. Եջմիածնում և այնուհետև օգտագործվել Մ. Եկմալյանի հայտնի բազմաձայն Պատարագում, այլ նաև փնտրում նոր մեղեղիներ, ավելի վաղնջական «իսկական», հինավորց, ուշ ազդեցություններից շվճասված:

Արական երգչախմբի համար գրված Պատարագը ոչ միայն կոմպոզիտորի ստեղծագործական ուղու զագարենակետն է, այլ նաև հայ հոգենոր երաժշտության զարգացման բոլորովին նոր փուլ: Պատարագի երաժշտությունը գերում է անկրկնելի գեղեցկությամբ, վեհությամբ, ազգային ոճի բյուրեղյա մաքրությամբ: Հենց սկզբում հնչող «Խորիուրդ խորին» զգեստավորման շարականի խորիրդավոր և բովիչ երաժշտությունը կարծես կանխորշում է պատարագի հիմնական իմաստն ու տրամադրությունը. ոգու բոիչը դեպի անհուն հեռուները, առ Աստված:

Պոլսական շրջանում գիտական խնդիրներից Կոմիտասին առանձնապես զբաղեցնում էր խագերի գաղտնիքը: Դրա բացահայտմանը նա նվիրեց իր կյանքի 20 տարին և հիմա, նո-

թից անդրադառնալով դրան, կարևորագույն հայտնագործության շեմին էր կանգնած:

Խազերի խնդիրը Կոմիտասն արդարեւ համարում էր միջազգային նշանակության մեծ խնդիր: Այն հեռավոր ժամանակների երաժշտությունից աշխարհում զրեք ոչինչ չէր պահպանվել: Եվ խազերը, եթե հնարավոր լիներ դրանք կարդալ, կարող էին լույս սփռել ոչ միայն հնադարյան հայ երաժշտության, այլև մյուս ժողովուրդների երաժշտության վրա: Բացի դրանից, Կոմիտասը, փորձելով «վերականգնել» հինավոր մեղեդիների հնչողությունը, կարծես ցանկանում էր ստուգել իր գտած երաժշտական ոճի ճշտությունը: Նրան թվում էր, որ միայն վերծանված խազերը կարող են պատասխանել՝ ճիշտ է արդյո՞ք նա ըմբռնել հայ երգի ոգին ու կերտվածքը, որը գիտեին հեռավոր նախնիները, և որը փորձությունների միջով այնքան խնամքով տարել էր գյուղերում ծվարած հասարակ ժողովուրդը:

Խազերի խնդիրի մասին Կոմիտասը խոսել էր հայտնի ոռու կոմպոզիտոր Մ.Գնեսինի հետ հանդիպման ժամանակ, որն այցելել էր նրան Պոլսում 1914 թվականին: Գնեսինի վկայությամբ, Կոմիտասը քավական առաջ էր գնացել խազերի զաղտնիքի մեկնության մեջ: Նույն այդ գրույցի ընթացքում Կոմիտասն առանձնահատուկ զերմությամբ էր արտահայտվել ոռու երաժշտության, ոռու կոմպոզիտորների մասին: «Կոմիտասը շատ լավ խոսում էր ոռուերեն, - գրել է Գնեսինը իր իիշողություններում: - Իմանալով, որ ես եղել եմ Ռիմսկի-Կորսակովի աշակերտներից, նա ասաց ինձ, որ մեծ հարգանքով է լցված դեպի այդ արվեստագետը, և ցույց տվեց նոտաների ու գրքերի կույտը սեղանի վրա. - Ռիմսկի-Կորսակովի մի քանի գործերն ու հարմոնիայի նրա դասագիրքը իմ սեղանի գրքերն են:

Դա ինձ, անշուշտ, չափազանց հաճելի էր լսել»:

1914 թվականի հունիսին Փարիզում կայացավ Սիօնազգային երաժշտական ընկերության հերթական համաժողովը: Այնտեղ Կոմիտասը զեկուցում կարդաց հայ ժողովրդական և հոգենոր երաժշտության մեջ հին (խազեր) և նոր նոտագրության

մասին: Նա հանդես եկավ նաև իր գործերի կատարմամբ:

Փարիզում Կոմիտասն ապրեց վերջին և թերևս իր կյանքի ամենափայլուն հաղթահանդեսը: Ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր երաժիշտների վկայությամբ, Կոմիտասի ելույթները համաժողովի մասնակիցների վրա բողել էին անմռունավի տպավորություն: «1914թ. Փարիզի երաժշտական միջազգային համագումարում, որ հավաքվել էին տիեզերքի գլխավոր երաժշտագետները, - զրել է հետազայում Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլերը, - Կոմիտասը տվեց հայ ժողովրդական և հոգեոր երգերի մի համերգ՝ հիացմունք պատճառելով ներկա երաժշտական հեղինակություններին:»

Ժողովրդական երաժշտության, ինչպես և արորի, խոփի, զուրանի երգերի մասին նրա դասախոսությունները, պետք է ասել, համագումարի նիստերից ամենաբանկագինը եղան:

- Երբ Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ՝ մեղմորեն երգելու հայկական երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր լուս, և այսուեղ տիրեց վեհապանձ հմայրը, այն զերագույն պարզությունը, որ բխում է հայկական երաժշտությունից»:

Կոմիտասի ելույթները Փարիզում, հայ երաժշտության միջազգային ճանաչումը լայնորեն լուսարանվում ու քննարկվում էին հայկական մասովի էջերում: Նրա վերադարձը Պոլիս սպասվում էր մեծ անհամբերությամբ: Կոմիտասը դարձել էր օրվա հերոս:

Ժամանելով Պոլիս՝ Կոմիտասը հարցազրույց տվեց «Ազատամարտ» թերթի թղթակցին:

«-Ի՞նչ տպավորութիւն բռնուցին, - հարցուցինք նախ, - Ձեր հայտնած տպավորութիւնները հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեանց մասին:»

- Նախ որ իմ յայտնած տեսութիւններս հայ հոգեւոր և զեղջուկ երաժշտութեան մասին՝ նորութիւն էին մանավանդ անոնց համար, որոնք դեռ տարի մ'առաջ կ'անգիտանային կամ կը մերժէին հայ ինքնուրոյն երաժշտութեան մը գոյութիւնը: Յետոյ

շատերը, որ հայ երաժշտութեան մասին հարեւանցի գաղափար մը միայն ունեին՝ դասախոսութիւններէ ետքը առաջինը եղան խոսքովանող, որ հայ երաժշտութիւնը զեղարուեստական բարձր արժեք մը կը ներկայացնէ, ավելի հարազատ, քան ուրիշ շատ մը ժողովուրդներու մէջ եւ աւելի վսեմ՝ քան արեւելեան ուրիշ ազգերու մօտ: Ու երաժշտական մեծ վարպետներ՝ երբ դասախոսութիւններս կ'աւարտէի, չէին կրնար իրենց զարմանքն ու հիացմունքը զապել իրենց համար օտար այս երաժշտութեան ծանօթանալով, որ ոչ միայն նորութիւն էր իրենց համար, այլ նաև ապշեցուցիչ նորութիւն մը ... Ուրախ եմ, որ բոլոր այդ յայտնի վարպետները կրցան քափանցել, որքան հնար էր, հայ երաժշտութեան խորութեանց եւ բարձրածայն յայտարարեցին անոր ուժն ու ընթացութիւնը, չվարանելով նոյնիսկ «աստուածային» կոչել զայն»:

- Իսկ ի՞նչ պիտի ըստիք, սիրելի Վարպետ, այն վլվուկներուն առքի, զոր ցոյց տուաւ հոս տիրացուներու ճահիճը: Կ'ակնարկեմ այն տիսմար պայքարին, զոր պոլսահայ տիրացուներ՝ կրօնական ժողովին անիմաստ իրարանցումէն քաջակերուած, բացին Ձեզի դէմ, զրամափոնի ծանօթ խնդրոյն առքի<sup>1</sup>:

Վարդապետը, որ ցարդ խօսեր էր ոգեւոր եւ խանդավառ, կը լոէ յանկարծ, եւ ես իր աշքերուն մէջ կը կարդամ տարտամ դառնութեան մը զգացումը, զոր ի զուր կը ջանայ սրողել ինձմէ: Ու կը տեսնեմ, որ այդ դառնութիւնը հետզիետէ անտարերութեան մը կը փոխվի, երբ խօսք կ'առնէ Վարդապետը շարունակելու համար:

- Ես տարիներու աշխատանքով շիներ եմ իմ ուղեգիծը, ուրկէ ընթացեր եմ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ ետքն ալ որքան ատեն որ ուժ զգամ երակներուս մէջ. ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս մէջ. որու

<sup>1</sup> Կոմիտասի մասնակցությամբ նրա՝ արտասահմանում զտնվելու ժամանակ գրամաֆոնային ձայնասկավառակների վրա ձայնագրվել էին մի շարք ժողովրդական և հնադարյան հոգեւոր մեղեդիներ: Հետադեմ հոգեւորականները, օգտագործելով այդ փաստը իբրև հարմար պատրվակ, նոր հալածանքի արշավ սկսեցին Կոմիտասի դէմ:

նուիրականութեանը համոզված եմ ես բոլոր սրտովս:

Կրկին կը լրու, ու այս անգամ ես եմ որ կ'ընդմիջեմ իր խորհրդաւոր լրութիւնը.

- Իսկ ասկէ ետքը ի՞նչ ընելու մտադիր էք:

- Շարունակել իմ ճամքաս,- կ'ըսէ կտրուկ ու վճռական»:

Սակայն շարունակել իր ճամփան Կոմիտասին շիածողվեց: Արդեն հնչել էին կրակոցները Սարաևոյում, և աշխարհն անկասելիորեն ընթանում էր աղետին ընդառաջ: Շուտով սկըսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որտեղ Թուրքիան հանդես եկավ Գերմանիայի և նրա դաշնակիցների կողմից:

Իշխանության գլուխ կանգնած երիտրուքերի կառավարությունը նապատակ էր դրել օգտագործել պատերազմը «հայկան հարցի» վերջնական լուծման համար: Կազմվել էր Թուրքիայի տարածքում բնակվող բոլոր հայերին բնաջնջելու հրեշտակոր ծրագիր: Հետևողականորեն ու մանրակրկիտ՝ այդ ծրագիրը սկսեց կենսագործվել: Առաջին հարվածն ուղղված էր հայ մտավորականության դեմ: 1915 թվականի ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ձերբակալվեցին առաջին երկու հարյուրը՝ նշանավոր հայ գրողներ, հասարակական գործիչներ, հրապարակախոսներ, թժիշկներ, իրավաբաններ: Նրանց մեջ էր և Կոմիտասը: Մի քանի օր անց միայն Պոլսում ձերբակալվածների թիվը հասավ վեց հարյուրի:

Ապրիլի 30-ին սկսվեց ձերբակալվածների արսորը երկրի խորքը: Արսորման գործն անձամբ դեկավարում էր ոստիկանության պետ Բեղրի բեյը: Ձերբակալվածները (նրանց մեջ և Կոմիտասը) դուրս բերվեցին ոստիկանական և կանոնավոր բանակի գինվորներով շրջափակված հրապարակ և շարքի կանգնեցվեցին: Փողոցներում երթեւկությունն ամբողջությամբ դադարեցվեց: Պահակախմբի ուղեկցությամբ շարասյունը շարժվեց դեպի նավահանգիստ: Նրանց լցրեցին նավը և ուղարկեցին հակառակ ափը: Այստեղ նրանց սպասում էր հատուկ գնացքը:

Գնացքը շարժվեց Անկարայի ուղղությամբ: Վագոնների

պատուհանները հուսալիորեն վարագուրված էին, սովորական կանգառներում զնացը չէր կանգնում: Այաշ ավանի մոտ ցուցակով կանչեցին 90 մարդ և տարան: Այլևս նրանք չվերադարձան: Մյուս արսորվածները հասցեցին Վերին Անատոլիայի անմարդաբնակ ու ամայի Չանգը շրջանը: Նրանց ընդունեց տեղի զինվորական պարետը: Զեռքի լապտերի աղոտ լուսի տակ թուրքական սպան ուշադիր զննում էր մոտով անցնող ձերքակալվածներին: Նրա դեմքին զնալով ավելի բացահայտ էին արտահայտվում զարմանքն ու տարակուսանքը: Մայրաքաղաքից նա ստացել էր կառավարական հեռազիր, որում հաղորդվում էր «հատկապես վտանգավոր հանցագործների հրոսակախմբի» գալուստը Չանգը, որոնց անհրաժեշտ էր անհապաղ վերացնել: Իսկ նա իր առջև տեսնում էր մարդկանց, որոնց լավ էր ճանաչում ողջ երկիրը: Համոզված, որ ողբերգական թյուրիմացություն է տեղի ունեցել, նա հրաժարվեց կատարել հրամանը և իր պատասխանատվությամբ ձերքակալվածներին տեղափորեց մոտակա տներում (նա նոյնիսկ բավարար քանակությամբ զինվորներ չուներ այդքան մեծարիվ ձերքակալվածների հսկելու համար):

Սակայն քննաջնջման անողոր մերենան արդեն գործի էր դրված: Պարետի հարցմանը հետևեց ավելի վաղ ստացված հրամանը հաստատող պատասխան: Հայտնվեցին և բարձրաստիճան նոր պաշտոնյաներ: Աքսորյալների բախտը կանխորշված էր: Համարյա ամեն օր ընթերցվում էին ձերքակալվածների ցուցակները, որոնք իրք ուղարկվում էին Դիարքերի՝ ռազմադաշտային դատարանում նրանց գործերի քննության համար: Այդ ողորմելի պատրվակի եռթյունը բոլորին պարզ էր: Շահապարհին ձերքակալվածներին զազանաբար սպանում էին: Այդպես նահատակվեցին ականավոր բանաստեղծներ ու գրողներ Վարուժանը, Սիամանրոն, Ռուբեն Սևակը, նշանավոր գրող և թուրքական պառլամենտի պատգամավոր Գրիգոր Չոհրապը և հայ մշակույթի, գիտության, լուսավորության ուրիշ շատ ականավոր ներկայացուցիչներ: Գերմանացի պատմաբան դոկտոր Լեպսիոսի վկայությամբ՝ հայ

մշակույթի ձերքակալված բոլոր գործիչներից միայն ութ հոգու հաջողվեց խուսափել զոհվելուց:

Աքսորից Կոմիտասը վերադարձավ բոլորովին այլափոխված: Նախկին աշխույժ միտքը, բնավորության զվարք դյուրահաղորդությունը վերափոխվել էին ընկճվածության ու մելամաղձության: Նա ասես անջրպետվել էր արտաքին աշխարհից՝ փակվելով իր մեջ, իր մոռայլ ու ծանր խոհերի մեջ: Նրա տանը հաճախ տեղի էին ունենում սրտակեղեր տեսարաններ, երբ զալիս էին ձերքակալվածների հարազատները և խնդրում պատմել մերձավորների ճակատագրի մասին: Ի՞նչ կարող էր ասել նրանց:

Աստիճանաբար Պոլիս էին հասնում լուրեր երկրի բոլոր հայարնակ զավառներում մոլեզնած անօրինակ ողբերգության մասին: Հայ մտավորականության բնաշնօւմից և հայ տղամարդկանց ռազմական ծառայության զինակոչից հետո (որոնք անմիջապես մեկուսացվում էին, արտորվում հեռավոր զավառներ և այնտեղ աստիճանաբար, խմբերով ոչնչացվում) դահիճների ձեռքերն ավելի արձակվեցին: Հասավ բացարձակապես անպաշտպան կանանց, երեխաների, ծերերի հերքը:

Թուրքական կառավարության ներքին գործոց նախարար Թալեաթ թեյր իր հեռագրերից մեկում՝ հասցեագրված Հալեպի նահանգապետին, կարգադրում էր. «Զեզ արդեն հաղորդվել է, որ Զեմիերի (Երիտրուքերի ղեկավար կոմիտեն - Գ.Գ.) հրահանգով որոշվել է լրիվ ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայերին: Նրանք, ովքեր դեմ դուրս կգան այդ որոշմանը, չեն կարող մնալ իրենց պաշտոններում: Որքան էլ դաժան լինեն ձեռք առնված միջոցները, պետք է վերջ դնել հայերի գոյությանը: Ո՛չ մի ուշադրություն չդարձնեք ո՛չ տարիքին, ո՛չ սեղին, ո՛չ խղճի խայրին»:

Զանգվածային կոտորածի կարճ ժամանակամիջոցում նահատակվեց մոտ մեկուկես միլիոն հայ:

1916 թվականին Արևմտահայաստան այցելած ֆրանսիացի հրապարակախոս Անրի Բարբին գրում էր. «Ով անցնում է այժմ ամայացած Հայաստանով, չի կարող չցնցվել այնքան

պերճախսու են ավերակների ու մահվան անվերջանալի հեռաստանները: Զկա մի ժառ, չկա մի ժայռ, մամուտի մի փուլօց, որ պղծված չլիներ թափված արյան շիթերով: Զկա մի վտակ, գետ կամ գետակ, որ դեպի հավերժական մոռացում չտաներ հարյուր հազարավոր մեռած մարմիններ: Զկա մի անդունդ, չկա մի ձոր, որ չլինեին զերեզման՝ քաց երկնքի տակ, որոնց խորքում ճերմակին չտային կմախճների քաց կույտեր, քանզի զրեքն ոչ մի տեղ մարդասպանները ոչ ժամանակ են ունեցել, ոչ նեղություն են քաշել քաղելու իրենց զոհերին:

Երբեմնի աշխույժ ծաղկող հայկական բնակավայրերով այդ լայնարձակ գավառներում այսօր թագավորում է ավերումն ու ամայությունը»<sup>1</sup>:

... Մելամաղձության նոպաներն ավելի ու ավելի հաճախ էին տանջում Կոմիտասին և դառնում առավել տեսական: Սի ամբողջ ժողովրդի կործանման զարհուրելի պատկերը և շրջապատող աշխարհի՝ կատարված ողբերգության հանդեպ լրիվ անտարբերությունը նրան թվում էին անըմբոնելի, մարդկային բանականության սահմաններից դուրս: Նրա քողած վերջին գրության մեջ, երբ բորբոքված ուղեղում դեռ չին մարել գիտակցության վերջին կայծերը, հնչում է անելանելիությունն ու խոր հուսահատությունը. «Հոտն անհովիվ՝ մոլոր ու շփոք աներևույթ և անզուսպ ալիքներ հախուտն կիուզեն ի խորս մեր հալածական և ողբերգախ կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած, միամիտ ձկներ ցանցած: Մընուրտը քույն կտեղա, բուժիչ ուժ չկա: Ավերած, սարսափ ու սանձարձակ կեղերում մեկ կողմեն, անտարբերություն, օտարամոլություն ու ցեխուտ սրտեր մյուս կողմեն ... Ու՞ր է մեր խոհական խորենացին, թող ելլեւ արյունաբամ հողու տակեն և ողբա մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը ...

Սիրտս փլած է ...»:

1916 թվականի գարնանը Կոմիտասի առողջական վիճա-

<sup>1</sup> Այս վավերագրերը մեջբերվում են ըստ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ոռուերեն ժողովածուի, Մ.Գ.Ներսիսյանի աշխատասիրությամբ, Երևան, 1966թ.:

կը կտրուկ վատքարացավ, և նրան տեղավորեցին հոգեբուժա-  
րանում: Պատերազմի ավարտից հետո նրան տեղափոխեցին Փարիզ: Սակայն ամենաորակյալ թշկական օգնությունն ան-  
զոր եղավ փոխելու հիվանդության ընթացքը: Ապարինման ոչ մի  
հույս չկար: Իր վերջին ապաստանը նա գտավ փարիզյան Վիլ-  
Շուիֆ արվարձանի հիվանդանոցում ...

1915 թվականի իրադարձությունները, Կոմիտասի ձերբա-  
կալությունը և դրան հետևած հիվանդությունը ամենաողեր-  
գական ձեռվ անդրադարձան մեծ երաժշտի դիվանի ճակա-  
տագրի վրա: Նրա ձեռագրերը ցրիվ եկան աշխարհով մեկ, իսկ  
շատերն էլ անդարձ կորան: Անհետ կորավ նրա մեծարժեք գի-  
տական աշխատությունը խազերի մասին, մինչ այժմ չեն գտնվել  
ժողովրդական մեղեղիների գրառումների և նրա ինքնու-  
րույն ստեղծագործությունների մի զգալի մասը ...<sup>1</sup>

Կոմպոզիտորի մահը վրա հասավ 1935 թվականի հոկտեմ-  
բերի 22-ի առավոտյան: Նրա աճյունը փոխադրվեց Երևան և  
այստեղ ժողովրդի հսկայարանակ քազմության ներկայությամբ  
հողին հանձնվեց հայ մշակույթի զործիչների պանթեոնում:

<sup>1</sup> Կոմիտասի հիվանդության սկզբում Փարիզում կազմվեց հատուկ Կո-  
միտասյան հանձնաժողով, որի նպատակն էր կոմպոզիտորին նյու-  
թական օգնություն ցույց տալ և հրատարակության նախապատրա-  
ստել նրա անտիպ ձեռագրերը: Հանձնաժողովը շնորհակալ գործ կա-  
տարեց Կոմիտասի դիվանը հավաքելու ուղղությամբ: Հետագայում այդ  
աշխատանքը շարունակեցին Խորհրդային Հայաստանի երաժիշտ-  
ները: Ներկայումս դիվանի նշանակալի մասը կենտրոնացված է Երևա-  
նում՝ Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում:  
1960 թվականից գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտու-  
տի կողմից սկսվել է Կոմիտասի երկերի ժողովածուի հրատարակութ-  
յունը (խմբագիր՝ Ռ.Արայան): Ներկայումս լույս է տեսել տասնմեկ  
հատոր: Կոմիտասյան ձեռագրերի որոնումները շարունակվում են:

## 6

«Ժողովրդական երգը մեծ դեր է խաղալու ապագա ուղիղ երաժշտության ճանապարհը գծելու գործում»

Կոմիտաս «Միքոուցիկ ակնարկ...»

Այդպիսի արվեստի ամբողջ կենսազգացողությունը, հավատացեք, կդառնա բոլորովին այլ: Նա կիմի առավել զարր ու համեստ: Դա անխոսափելի է և դա երջանկություն է: Նրա վրայից կրափի մելամադուտ հավակնուության բեփուկը, և նոր մաքրությունը, նոր անխոռվությունը կկազմի նրա էությունը: Եվ ոչ որի այլևս չի զարմացնի առանց տառապանքի, հոգով առողջ, ոչ պաթետիկ, անքախիծ-դյուրահավատ, մարդկության հետ եղրայրացած արվեստը:

**Թ: Մանե «Դոկտոր Ֆառատու»**

Կոմիտասի գործի և անձի մասին գոյություն ունի ծավալուն և մեծավ մասամբ արժեքավոր գրականություն: Ծանոթությունը դրա հետ հնարավորություն է տալիս հետևել Կոմիտասի դերի և նշանակության վերաբերյալ հայացքների պատմական զարգացմանը: Յուրաքանչյուր սերունդ ասես նորից էր հայտնաբերում նրան: Ավելի ստույգ, գտնում էր նրա ստեղծագործության մեջ նոր կողմեր, նոր նրբերանգներ՝ մինչև այդ անհայտ նրանց նախորդներին: Որոշ իմաստով Կոմիտասի արվեստի ավելի ու ավելի խոր ըմբռնման գործընթացը շարու-

նակվում է նաև մեր օրերում: Դրանում արտասովոր ոչինչ չկա, այդպիսին է յուրաքանչյուր խոշոր արվեստագետի ստեղծագործական ժառանգության ճակատագիրը:

Սակայն Կոմիտասի գործունեության իսկական չափերի ստույգ ըմբռնմանը խանգարել են նաև բոլորովին այլ կարգի հանգամանքներ: Ըստ Էռիքյան, այն, ինչ զիտեր արտարին աշխարհը Կոմիտասի մասին իր կյանքի օրոր, իհմնված էր նրա հարատագույն ստեղծագործական ժառանգության լոկ աննշան մասի վրա: Պատմական անքարենպաստ պայմաններն ու Կոմիտասի ժանր կյանքի ուղին, որի ընթացքում նա հարկադրված էր միայնակ պայքարել բազմաթիվ խոչընդոտների դեմ, այն ժամանակ հնարավորություն չեն տվել թեկուզ ինչ-որ չափով ամբողջական ներկայացնել նրա ստեղծագործությունը և արտարին աշխարհից գրեթե բարցրել են Կոմիտաս-բանահավաք զիտնականի գործունեության տիտանական թափը: Թերևս դրանով կարելի է բացատրել՝ ինչու Կոմիտասի նշանակությունը երկար տարիների ընթացքում դիտարկվում էր գրեթե բացառապես ազգային երաժշտության սահմաններում: Այնինչ, եթե փորձենք իմաստավորել Կոմիտասի գործունեությունը պատմական լայն հեռանկարի մեջ, ապա նա կներկայանա իբրև 19-20-րդ դարերի սահմանազդի համաշխարհային երաժշտական արվեստի ամենահետաքրքիր ու ականավոր դեմքերից մեկը: Ի դեպ, միայն այդ տեսանկյունից է հնարավոր նաև Կոմիտասի՝ իբրև ազգային արվեստագետի նշանակության առավել ճիշտ ըմբռնումը:

Կոմիտասի ստեղծագործությամբ հայ նոր մասնագիտացված երաժշտությունն իր առաջին ինքնուրույն ավանդը ներմուծեց եվրոպական արվեստի ընդհանուր զարգացման մեջ՝ անհավատալի կարծ ժամանակամիջոցում նվաճելով առաջավոր երաժշտական մշակույթների շարքում հավասար դիրք գրավելու իրավունքը: Այդ պատմական ժառայության մեջ է Կոմիտասի արմատական տարրերություններից մեկը իր նախորդներից և ժամանակակիցներից հայ երաժշտության մեջ:

Ինչո՞ւմ է կայանում այդ ավանդը: Ամենից առաջ՝ ժողովր-

դական արվեստի հանդեպ նոր մոտեցման մեջ:


Կասկածից վեր է, որ 19-րդ դարի ազգային կոմպոզիտորական դպրոցներից շատերի, որոնց մեջ հատկապես առանձնանում էր ուսականը, զարգացման ամենաբնորոշ գիծը սեռուն ուշադրությունն էր դեպի ժողովրդական ստեղծագործությունը՝ իրք մասնագիտացված արվեստը սնող աղբյուր: Կոմիտասի ստեղծագործությունը նույնպես ձևավորվել է համաշխարհային երաժշտության այդ ուղղվածության հունի մեջ: Բայց ճիշտ չէր լինի կարծել, որ կոմպոզիտորների վերաբերմունքը դեպի ժողովրդական արվեստը մնացել էր անփոփոխ ողջ 19-րդ դարի, ապա նաև 20-րդ դարասկզբի ընթացքում: Ընդհակառակը, այստեղ ի հայտ է գալիս որոշակի առաջընթաց, որն անմիջականորեն առնչվում էր բուն երաժշտական արվեստի զարգացման հետ:

Ակադեմիկոս Ռ. Ասաֆիև բացահայտում է Գ. լինկայի մեքոնի էությունը՝ իրք «Ժողովրդա-մոնումենտալ ոճի հայտարերում՝ դասականորեն հղկված, ամենառաջինալ եվրոպական տեխնիկայի սահմաններում»: Նման ձևով կարելի է բնորոշել նաև երաժշտական շատ երևույթներ անցյալ հարյուրամյակում ձևավորված ազգային մյուս դպրոցներում: Եվ դա բնական էր, բանզի դարերի ընթացքում կազմավորված եվրոպական երաժշտական համակարգը՝ «դասականորեն հղկված և ամենառաջինալ» (Ասաֆիև զարմանալիորեն դիպուկ բնորոշմամբ), 19-րդ դարասկզբին դեռևս լեցուն էր հզոր կենսական ուժերով և պոտենցիալ հնարավորություններով: Օգտագործելով այդ հնարավորությունները՝ 19-րդ դարի կոմպոզիտորները ստեղծեցին բարձրագույն արվեստ, և այդ դարը պատմության մեջ մտավ իրք երաժշտության «ոսկեդար»:

Սակայն անցյալ հարյուրամյակի վերջերից իրադրությունը եվրոպական երաժշտության մեջ նկատելիորեն փոխվեց: Նրանում ավելի ու ավելի պարզորշ սկսեցին ի հայտ գալ ճզգնաժամային երևույթներ:

Ինչպես հաճախ է լինում արվեստում, իր դարաշրջանի գեղարվեստական պահանջներով կյանքի կոչված, ուստի և լիիմաստ ու լիանշանակ, տեխնիկական որոշակի հնարներ, ար-

ერათ უმრავსათვოსა უქმნადოთ ეობენ ცისტები



II  
II  
II  
II  
II

— — — — —



տահայտչամիջոցներ ժամանակի ընթացքում ասես արժեզրկվում են, կորցնում իրենց նախկին արտահայտչական ուժը:

Արվեստի «հավերժական», «անսասան» կանոնների բնույթը ընդունելով, այդ հնարները որոշակի փուլում վերածվում են ձևական, անբովանդակ տեխնիկայի: Այդպիսի դեպքերում արվեստագետն իր ստեղծագործության մեջ սնվում է ոչ թե իրականության անմիջական տպավորություններով, այլ տարբերակում, վերափոխում է (երբեմն փայլուն հմտությամբ, եթե նա, իհարկե, տաղանդավոր է) այն, ինչ արդեն գտնված է նրա նախորդների կողմից: Ակադեմիականացման նման ընթացքը (որն, իբրև կանոն, առաջանում է արվեստի տեխնիկական հնարների բարձր զարգացման պահերին, երբ Ռոմեն Ռուլանի խոսքերով՝ «լեզվի կատարելագործումը շատ հաճախ նրա ներքին սնանկությունը քողարկող պատրանը է ստեղծում») 19-րդ դարավերջի եվրոպական երաժշտության համար դարձավ իրական վտանգ: Այդ առիթով Լիստը տագնապով է կիսում իր մտքերը Բորոդինի հետ. «Դուք գիտե՞ք Գերմանիան: Այստեղ շատ են գրում. ես խեղդվում եմ երաժշտության ծովի մեջ, որով ինձ հեղեղում են, բայց, աստված իմ, որքան տափակ է այդ ամենը: Ոչ մի կենդանի միտք: Այնինչ ձեզ մոտ կենդանի շիք է հոսում. վաղ թե ուշ (հավանական է, որ ուշ) այն իր համար ճանապարհ կհարթի նաև մեզ մոտ»:

Արևելքի պատկերներին դիմելու մեջ, որ ավելի ու ավելի հաճախ էր իրապուրում եվրոպական կոմպոզիտորներին՝ հատկապես ոուսական և ֆրանսիական, նույնպես արտահայտվեց բարենորդման, ավանդական եվրոպական երաժշտական նյութի «թարմացման» ձգտումը:

Այս գլխի սկզբում իբրև բնարան բերված են Թոմաս Սանիի «Դոկտոր Ֆաուստոս» վեպից Լևերկյունի խոսքերը: Լևերկյունը՝ վեպի գլխավոր հերոսը, հանճարեղ կոմպոզիտոր է՝ մոլորված 20-րդ դարի ամենանրբահնար անհատապաշտական արվեստի բանձր մշուշում: Նրա խոսքերում հնչում է անկեղծ կարոտ նոր երաժշտության, նոր արվեստի հանդեպ, որը պետք է, վերջապես, պոկվի մեկուսացման կախարդված մթնոլորտից և

«Անտվի» դեպի ժողովուրդը:

Լևերկյունի կերպարը ծայրահեղ արտահայտությունն է այն սուբյեկտիվիստական ուղղությունների, որոնք լայնորեն տարածվել են 20-րդ դարի առաջին կեսին Եվրոպական արվեստում: Սակայն առաջադեմ արվեստագիտներից շատերը վաղ էին զգացել այդ փոանգը և համառորեն որոնում էին դրա հաղթահարման ուղիները: Նրանց հայացքները նորից և ավելի հաճախ էին ուղղվում դեպի «հավերժական» երաժշտական արժեքները և առաջին հերթին՝ դեպի ժողովրդական արվեստը:

Հենց բուն ժողովրդական երաժշտության օրենքների ըմբռնման և մասնագիտացված ստեղծագործության ոլորտում դրանց կենսագործման մեջ էր տեսնվում ավանդականորեն ձևավորված Եվրոպական երաժշտական համակարգի արմատական բարենորոգման և հարստացման հնարավորությունը: 19-րդ դարի երկրորդ կեսին առաջացած այդ միտումները (այդ առումով մարգարեական էր Մուտորզկու փորձը) առանձնահատուկ փայլով են դրսելորվում արդեն մեր դարի սկզբին: Դրժվար չէ նկատել, որ բանահյուսության հանդեպ ավելի ընդհանուր հայացքները՝ տիպական նախորդ դարաշրջանի համար, փոխարինվում են ժողովրդական արվեստի երևույթների հանդեպ տարրերակված գիտական մոտեցմամբ: Որոնումներ են կատարվում երաժշտական բանահյուսության առավել ինքնատիպ, «խորքային» շերտերի հայտնաբերման ուղղությամբ: Սի կողմից ժողովրդական երաժշտության «փսկական» նմուշներ հայտնաբերելու գծումը և մյուս կողմից ժողովրդական մեղեղիները հնարավորին չափ ճշգրիտ գրառելը՝ այնպես, ինչպես դրանք հնչում են բուն ժողովրդի մեջ, դասնում են ժամանակի հրամայական պահանջ և բացառիկ ազդեցություն գործում ստեղծագործական ընթացքի վրա: Բնութագրական է 20-րդ դարի երաժշտության խոշորագույն բարենորոգիչ, հունգարացի կոմպոզիտոր Բելա Բարտոկի խոստովանությունը. «Գեղջկական երաժշտությանը ծանրանալն ինձ համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ. քանի որ օգնեց ազատվելու մաժորամինորային համակարգի մենիշխանությունից...»

Պարզվեց, որ հինավորց, մեր մասնագիտացված երաժշտության մեջ չօգտագործվող հնչյունաշարերը չեն կորցրել իրենց կենսունակությունը և հնարավորություն են ընձեռում հարմոնիկ նոր հնարների համար.... Երբ ես... ծանրացած Դեքյուսիի երկերին և սկսեցի ուսումնասիրել զարմանքով նկատեցի, որ նրա մելոսում նույնպես մեծ դեր են խաղում պենտատոնային դարձվածքները, ինչպես մեր ֆոլկլորում է... Հաճանման երևույթներ գտնում ենք նաև Ստրավինսկու ստեղծագործության մեջ: Ասես թե մեր դարաշրջանը միևնույն պահանջներն եներկայացնում իրարից շատ հեռու գտնվող երկրներին՝ մասնագիտացված ստեղծագործությունը բարեփոխիւել ու բարմացնել վերջին հարյուրամյակներում անաղարտ մնացած գեղջկական երաժշտության տարրերով»: (Ընդգծումը մերն է - Գ. Գ.):

Կարենոր է նշել, որ Կոմիտասը՝ և իրեն բանագետ, և իրեն արվեստագետ, դարձավ այդ ամենաբնորոշ միտումի ռահվիրաներից մեկը նոր ժամանակի երաժշտության զարգացման մեջ: Իսկ գեղջկական բանահյուսության նմուշների ընդգրկման լայնության (Կոմիտասի կողմից, ինչպես արդեն նշվել է, զրառվել է մի քանի հազար ժողովրդական մեղեղի), երկարամյա հետևողական դիտարկումների հիման վրա ժողովրդական երաժշտության օրինաչափությունների ըմբռնման և իր ստեղծագործությունների մեջ կենսագործման իմաստով Կոմիտասի գործունեությունը զրեթե աննախադեպ է եղել իր ժամանակի համաշխարհային երաժշտական մշակույթի մեջ: Դրա հետ, թերևս, կարող է համեմատվել միայն Զոլտան Կողայի և Բելա Բարտոկի համանման գործունեությունը Հունգարիայում:

Կոմիտասը մոտենում էր ժողովրդական երգերին ոչ իրեն ապագա ստեղծագործությունների համար յուրահատուկ ու հետաքրքրական նյութի (ինչը ընդհանուր առմամբ բնորոշ էր 19-րդ դարի ոռմանտիկական երաժշտությանը): Նա խորագետ հավատացած էր ժողովրդական արվեստի գործերի իմքնուրույն գեղարվեստական արժեքավորության մեջ: Այդ առումով հայ ժողովրդական երգը, անտարակույս, չափազանց շնորհակալ նյութ էր ներկայացնում: Անցնելով զարգացման հա-

զարամյակների ճանապարհ՝ նա հասել էր բարձր կատարելության: «Նրա մեջ զգացվում է,- նկատել է Վ.Բրյուսովը,- դեռ օրոցքից աշխարհի ամենաքաղաքակիրք ազգերի միջավայրը նետված ժողովրդի մեծ հասունությունը... Հայ ժողովրդական բանաստեղծությունը պատշաճում է ինձ հայտնիներից առավել նշանավորների թվին: Չիչ ժողովուրդներ կարող են հպարտանալ, որ իրենց ժողովրդական երգերը հասնում են նման գեղարվեստական մակարդակի, այնքան նրազեղ են, այնքան ինքնատիպ իրենց անմիջական պարզության և անկեղծության հետ մեկտեղ»:

Եվ Կոմիտասին վիճակված էր դառնալ, եթե օգտվեն Ա.Վ.Լունաչարսկու արտահայտությունից, հայ ժողովրդական երգի «հանճարեղ խմբագիրը»: Ժողովրդական արվեստի կատարյալ իմացությունը և արվեստագետի հանճարեղ քննադր քույլ տվեցին նրան ժողովրդական ստեղծագործության «քառային, անհատակ» ծովից ընտրել գեղարվեստականորեն առավել վառ, ինքնատիպ, «մարուր» նմուշներ: Դրանցից նա ստեղծեց արիությամբ ու ուժով լեցուն, հերոսական ոգեշնչվածության և ողբերգական վեհության, նրազույն քննարականության և անքննազբու ժողովրդական հումորի կերպարների մեջ ծավալվող ժողովրդական կյանքի մի ողջ երաժշտական հերոսապատում: Այդ իմաստով Կոմիտասին կարելի էր կոչել հայկական երաժշտության Հոմերոս...

Կրքոտ համոզվածությունը ժողովրդական երաժշտության ուրույն արժեքայնությունը պաշտպանելիս և այն համառ ուշադրությունը, որ Կոմիտասը հատկացնում էր ուսական և նորագույն ֆրանսիական երաժշտական դպրոցներին, օգնեցին նրան համարձակորեն հաղթահարել իր ժամանակի՝ ավանդաբար ընդունված շատ պատկերացումներ: Նա չէր փորձում, ինչպես իր նախորդները, «հաշտեցնել» մայրենի երաժշտական խոսքի ինքնատիպ կերտվածքը եվրոպական երաժշտական ձևավորված տեխնիկայի հետ: Ընդհակառակը, հայ երաժշտության ինքնատիպ հնադարյան ավանդույթների մեջ նա գտավ հնարավորություններ, որոնք կարող էին եականորեն հարս-

տացնել Եվրոպական Երաժշտական մտածողության ընդունված կանոնները: Կոմիտասի Երաժշտական ոճի բնորոշ գծերի մեջ (հրաժարում Եվրոպական մաժոր-մինորի մենիշխանությունից, ակորդային նոր կառուցվածքների լայն օգտագործում, դիմում մողալ հարմոնիային, զարգացման ազատ, պոլիֆոնիկ սկզբունք և այլն) դրսերպեց համաշխարհային Երաժշտական գրականության մեջ շատ առումներով նորովի մոտեցում Երաժշտական նյութի կազմակերպման սկզբունքների հանդեպ: Կոմիտասը նրանց մեջ էր, ովքեր կանգնած էին հզոր բարեփոխչիչ շարժման ակունքների մոտ, որը շուտով ընդգրկեց Եվրոպայի ազգային Երաժշտական շատ մշակույթներ և կյանք տվեց ժամանակակից՝ 20-րդ դարի Երաժշտությանը:

Կոմիտասը ստեղծագործական ասպարեզ մուտք գործեց Երաժշտական արվեստի համար շափականց դժվար ժամանակներում՝ սկիզբ առնող ճգնաժամի, ավանդական շատ պատկերացումների բնկան դարաշրջանում: Այդ պայմաններում նորը միշտ չէ, որ առաջադեմի հոմանիշն էր, իսկ նորի որոնումները հաճախ ընդունում էին ձևական-ինքնարավ քննույթ՝ Երաժշտական արվեստը տանելով դեպի անելանելի փակուղիներ: Բարոյական բարձր իդեալներով օժտված արվեստագետի համար, ինչպիսին միշտ եղել է Կոմիտասը, նորարարությունը հանուն նորարարության, իհարկե, ոչ մի իմաստ չուներ: Երաժշտական նյութի կազմակերպման նրա նոր սկզբունքները ծագել են ժողովրդական արվեստի, ժողովրդական Երաժշտության էուրյունն առավել խորհ ու ամբողջությամբ ըմբռնելու ու արտահայտելու ձգտումից: Եվ ինչպես ցույց տվեց պատմությունը, դա մեր ժամանակի Երաժշտական արվեստի իսկական բարենորոգման գործուն և հեռանկարային ուղիներից մեկն էր:

Կոմիտասի ստեղծագործական գործունեությունը հայ մասնագիտացված Երաժշտության ամբողջ հետազա զարգացման հաստատուն իհմքը դրեց: Ընդհանրացնելով և քննադատաբար վերամշակելով իր նախորդների փորձը՝ Կոմիտասը հայկական Երաժշտությանը հաղորդեց միանգամայն նոր որակ:

Իր ազգային մշակույթի առավել հրատապ հիմնախնդիրների լուծումը նա կարողացավ քարձրացնել մինչև 20-րդ դարի ողջ երաժշտական արվեստի առջև կանգնած հիմնախնդիրների լուծման մակարդակը: Կոմիտասի ստեղծագործությունն ասես բացահայտեց ազգային երաժշտության անցյալ դարերի անձայրածիր հեռուն, տարավ դեպի նրա ծագման բուն ակունքները և միաժամանակ այն ուղղված էր ապագային, անրակտելիորեն կապված էր համաշխարհային երաժշտական արվեստի զարգացման նոր դարաշրջանի հետ: Եվ հենց դրանով է բացատրվում Կոմիտասի արվեստի ազրեցության համատարած բնույթը հայ կոմպոզիտորների հաջորդ սերունդների վրա: Որքան էլտարբեր լինելին նրանք իրենց անհատական նկարագրով և ոճական ուղղվածությամբ, դիմելով Կոմիտասին՝ նրանք գտնում էին և գտնում են նրա ստեղծագործության մեջ կենսաստեղծ գեղարվեստական գաղափարների անսպառ աղբյուր:

Կոմիտասի ժողովողական և դեմոկրատական արվեստի հիմնարար սկզբունքների նպր ներգործությունն առանձնահատուկ ուժով դրսենրվեց խորհրդային տարիներին, երբ քարենապատ պայմաններ ստեղծվեցին ազգային մշակույթի զարգացման համար: Իր «Երկրորդ ծնունդը» վերապրեց և Կոմիտասը: Ինչպես հայտնի, այնպես էլ նախկինում չիրատարակված նրա ստեղծագործությունների, ժողովրդական երգերի գրառումների և գիտական աշխատությունների բազմաթիվ հրապարակումների մեջ երևացին Կոմիտասի իսկական մեծությունն ու փայլը: Կոմիտասի ոգեշունչ երաժշտությունը հընչում է համերգներում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ, նրան նվիրվում են դասախոսություններ և գիտաժողովներ, նրա կյանքն ու գործը դարձել են մանրակրկիտ հետազոտության առարկա: Կոմիտասի անունով է կոչվում հայ ժողովրդի պատմության մեջ առաջին ազգային երաժշտական քարձրագույն կրթական հաստատությունը՝ կոնսերվատորիան, որի ստեղծման մասին իր ժամանակին նա այնպես երազել էր:

Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված կոնժակում Ամենայն հայոց Կաքողիկոս Վազգեն Առաջինը գրել է. «Կոմի-

տաս վարդապետ բարենորոգիչն է հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան եւ գիտարարը, որուն զործը կարելի է արժեստրել միայն մեսրոպեան չափանիշով... Ինչպես սուրբ Սեսրուպ քառսէն դուրս բերաւ եւ բիւրեղեց ձայները հայ բարբառին, եւ իր ազգին ու աշխարհին պարզեւեց կորողը հայերէն լեզուին, այնպէս ալ Կոմիտաս վարդապետ՝ պեղեց, մաքրեց եւ լոյս աշխարհ բերաւ կոյս աղքիւրը հայ երգին: Եւ բազում տարիներ, անդով, անյօդնարեկ, միշտ նոր ալիւնով ու ստեղծարար տենդով, այդ աղքիւրէն հայ երգին լոյսը բաշխեց իր ժողովրդին:

Հայ ժողովուրդը Կոմիտասեան երգին մէջ գտաւ, ճանչցաւ իր հոգին, իր ոգեկան ինքնութիւնը: Կոմիտաս վարդապետ սկիզբ մըն է, որ վախճան չունի: Ան պիտի ապրի հայ ժողովուրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի իրմով, ինչպէս այսօր, այնպէս ալ յալիտեան»:

600 ր

գԵՎՈՐԳ ՇԱՎՈՆԻ ԳՅՈՒԱԿՅԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Հրատ. Խմբագիր՝ Ա. Սահակյան  
Տեխ. Խմբագիր՝ Ն. Գևորգյան

ԳԱԱ ԵՀՅՆԱՐԴԱՐԻ ԳԻՒՏ. ԳՐԱԴ.



210020546

A T  
20546